

## ՍՈՒՐԻԱ ՇԵՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ»Ի ՀՐԹԻՈՒՎՈՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՐՅՈՎ

Սուրիա անգամ մը եւս կոչ ուղղեց Միջազգային Ապահովութեան Խորհուրդին՝ ԱՄՆ-ի հովանաւորած «Միջազգային Դաշինք»ի ուժերը հարցով հետաքննութիւն սկսելու եւ վերջ տալու սուրիական հողերուն վրայ օտար ուժերու ներկայութեան:

Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը երկու ամիս յետոյ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին եւ Ապահովութեան Խորհուրդի Նախագահին, յայտնելով որ. «Երեքշաբթի, 12 Փետրուար 2019-ին, «Միջազգային Դաշինք»ի զինուորական օդանավերը հրթիռակոծեցին Տեր Չօրի Պաղոզ գիւղը, որուն հետեւանքով անելի քան 70 քաղաքայիններ (մեծամասնութեամբ կիներ եւ մանուկներ) զոհուեցան եւ վիրաւորուեցան, արձանագրուեցան նաեւ նիւթական վնասներ»:



Նախարարութիւնը եզրափակելով ըսաւ. «Սուրիա վերստին կոչ կ'ուղղէ Ապահովութեան Խորհուրդին նոյնանման ուժերու ներկայութիւնը դատապարտելու եւ միջազգային ապահովութեան պահպանման ողջ պատասխանատուութիւնը կրելու, ապա նաեւ «Միջազգային Դաշինք»ի ուժերու ներկայութիւնը հարցով հետաքննութիւն սկսելու»:

## ՃԱՏՖԱՐԻ ՎԵՆԵՉՈՒԷԼ ԼԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԻՔՈՒՍ ՄՏԱՌՈՐՅԻՆ ՍՈՒՐԻՈՅ ԱՄԲՈՂՄԱԿԱՆ ԶՈՐԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆԵՅ

Չորեքշաբթի, 13 Փետրուար 2019-ին, ՄԱԿ-ի մօտ Սուրիոյ մնայուն բաւազնաց դոկտ. Պաշտար ալ ճաաֆարի «Չեզոք Պետութիւններու Շարժում»ին գումարած արտակարգ նիստին վերահաստատեց Սուրիոյ ամբողջական գօրակցութիւնը Վենեզուելայի Նախագահ Նիքոլաս Մատորոյի եւ խստիւ դատապարտեց ԱՄՆ-ի միջամտութիւնը Վենեզուելայի ներքին հարցերուն՝ կոչ ուղղելով Չեզոք Պետութիւններուն միասնական դիրքորոշում որդեգրելու Վենեզուելայի օրինական կառավարութեան աջակցութեան ուղղութեամբ:



ճաաֆարի յայտնեց, որ Սուրիա քաջ կը գիտակցի Վենեզուելայի դէմ ծրագրուած դաւադրութեան եւ անոր թշնամի պետութիւններուն նպատակներուն՝ դիտել տալով, որ անոնք կը միտին խլել երկրին հարստութիւնը եւ ի նպաստ իրենց փոխել անոր ռազմավարութիւնը: ճաաֆարի նկատել տուաւ, որ Վենեզուելայի հակառակորդները չեն հանդուրժեր երկրի ղեկավար տարրին անկախութեան եւ ազատութեան նկրտումները:

## ՎԵՐՇԻՆԻՆ «ԻՏԻՊԻ ՄԵՉ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ՀԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ԱԶԳՈՒ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ»

Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Սերկեյ Վերշինին յայտնեց. «Եթէ Իտլիայի մէջ զինուորական գործողութիւն տեղի ունենայ, ազգու պիտի ըլլայ, իսկ Ռուսիա Սուրիոյ մէջ ահաբեկչութեան ռաքստոցներու գոյութիւնը պիտի չարտօնէ»:



«Իտլիայ 2017-ին ստեղծուած յարուածութեան մեղմացման չորս գօտիներէն վերջինն է, որ տակաւին կը գործէ», ըսաւ ան՝ անելցնելով որ «Լարուածութեան մեղմացման գօտիներու շուրջ համաձայնութիւններուն մէջ քակիցս շեշտեցինք, որ ասիկա ժամանակակից դասաւորում մըն է, ինչ որ կը նշանակէ, թէ ոչ ոք այդ շրջանը յախտեանս պիտի ճանչնայ այնպէս ինչպէս որ է»:

«Կը շրջանը Սուրիոյ պետութեան եւ սուրիական հողերու անբաժանելի մէկ մասն է, ինչ որ կը նշանակէ, թէ Սուրիոյ մէջ ահաբեկչութեան արգելոցներու գոյութիւնը պիտի չարտօնենք: Մենք եւ Ռուսիոյ Նախագահը քակիցս յայտնեցինք, որ ուշ կամ կանուխ վերջ պետք է տալ ահաբեկչութեան», ըսաւ Վերշինին:

## ՀԱՅՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԷՏՆԵՐ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՍՈՒՐԻԱ ԺԱՄԱՆԵՅԻՆ

Հայաստանի մէջ Սուրիոյ դեսպան Մուհամմետ Յաճ Իպրահիմ եւ դեսպանի խորհրդատու Պաշտար Սաֆիէ 7 Փետրուարին Երեւանի մէջ մասնակցեցան մարդասիրական մասնագիտական օժանդակութիւն ցուցաբերելու համար Սուրիա ուղղուող հայ մասնագետներու խումբի մեկնումի պաշտօնական արարողութեան:

Արարողութեան ներկայ գտնուեցաւ նաեւ ՀՀ պաշտպանութեան փոխնախարար Գաբրիէլ Բալայեան:



Դեսպան Իպրահիմ խօսք առնելով լուսարձակի տակ առաւ Հայաստան-Սուրիա պատմական, բարեկամական յարաբերութիւնները՝ վեր առնելով մասնագիտական այս խումբին Սուրիոյ բարեկամ ժողովուրդին մարդասիրական օժանդակութիւն ցուցաբերելու ողջունելի քայլը:

8 Փետրուարին ականազերծողներէ, բժիշկներէ եւ անոնց անմիջական անվտանգութիւնը ապահովող հայ մասնագետներէ բաղկացած 83 հոգից խումբը Սուրիա ժամանեց:

Խումբը Հալէպի գիւնուորական գործողութիւններէ զերծ շրջաններուն մէջ բժշկական ծառայութիւն պիտի մատուցէ տեղւոյն բնակչութեան, միեւնոյն ատեն բնակիչները իրագել պիտի դարձնէ ականներէ զերծ մտաւոր միջոցներուն:

Սուրիոյ մէջ հայ մասնագետներու տեղաւորման, անոնց կարգավիճակի, գործառնութիւնը եւ անվտանգութեան առնչուող հարցերը կարգաւորուած են Հայաստանի Հանրապետութեան օրէնսդրութեան համաձայն:

«Արմէնիպրես» հաղորդեց, որ Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեան նախարարութեան վարչական շէնքին մամուլի սրահին մէջ Կիպրոսի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Սալա Անգելտիսի հետ միատեղ մամուլի ասուլիսի ընթացքին ըսած է, որ Սուրիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան կողմէ մարդասիրական առաքելութիւն կ'իրականացուի օրէնքի տարին համապատասխան:



«Սուրիոյ հետ մեր համագործակցութեան առնչուող պաշտօնական հաղորդագրութեան մէջ յիշուած է, որ եղած է գրաւոր խնդրանք Սուրիոյ իշխանութիւններէ: Եւ Հայաստանի Հանրապետութեան կողմէ մարդասիրական առաքելութիւն կ'իրականացուի օրէնքի տարին համապատասխան», ըսած է Տօնոյեան:

Աւելցնելով, որ 11 Փետրուարին, Հայաստանէն ժամանած բժիշկներու եւ ականազերծողներու մարդասիրական առաքելութեան մասնագետներուն խումբը Հալէպ հասաւ եւ դիմաւորուեցաւ Հայաստանի Հանրապետութեան Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգսեանի կողմէ:

Խմբագրական

Մարդասիրական Օժանդակության Մեջալ Արժանացումներ

Օրերս Հայաստանի Հանրապետությունն Սուրիա ժամանեց մարդասիրական օժանդակության մասնագետներու խումբը, որուն մաս կը կազմեն բժիշկներ, ակննագործման մասնագետներ եւ անոնց ապահովության հսկող ուժեր:

Խումբը հասաւ Հալէպ, ադիտալի այս քաղաքին զինեալ բախումներէ բացառապէս գերծ շրջաններուն մէջ մարդասիրական ու խաղաղասիրական աշխատանք տանելու՝ բժշկական ծառայութիւններ մատուցելու պատերազմէն տուժած տեղւոյն բնակչութեան, որպէսզի ան յետպատերազմէն այս շրջանին աղէտին հետքերը թօթափէ, ականներէն պաշտպանուելու եւ նախագուշուքին ձեռք բերելու համար մասնագիտական օժանդակութիւն ստանայ:

Մասնագետներու այս խումբը կը ծրագրէ հայկական վարժարաններու աշակերտութեան եւս իրագրել դարձնել ականներէ պաշտպանուելու միջոցներուն, նախագուշակական դասընթացներ կազմակերպելով անոնց համար:

Հայաստանի Հանրապետութեան եւ Սուրիոյ միջեւ պետական համաձայնութեան հիման վրայ առաջուած մարդասիրական այս օժանդակութիւնը ողջունելի է քանի մը նկատառումներով:

Ա) Նման օժանդակութիւն, իրականութեան մէջ, խաղաղասիրական քայլ է, որովհետեւ պատերազմէն ահաւոր վնասներ կրած ու հոգեպէս ընկճուած ժողովուրդը կը նախապատրաստէ խաղաղ կեանք վարելու՝ բարոյապէս նեցուկ կանգնելով անոր ու նպաստելով, որ ան հոգեպէս եւ ֆիզիքապէս թօթափէ պատերազմին դժուարութիւնները, անապահովութեան վախը եւ կորուստներուն առթած ցաւը:

Բ) Սա Հայաստանի Հանրապետութեան երախտագիտութեան մէկ արտայայտութիւնն է Սուրիոյ ժողովուրդին, որ պատմութեան ընթացքին մէկէ աւելի անգամներ անվերապահօրէն նեցուկ կանգնած ու օգնութեան ձեռք երկարած է հայ ժողովուրդին՝ ադիտալի իր օրերուն:

Գ) Օժանդակութիւնը Հայաստան-Սուրիա բարեկամական, պատմական յարաբերութիւններուն ամրագրման նպաստող քայլ մըն է նաեւ: Այս երկիրները, պատմութեան ընթացքին ճակատագրակից եղած են թէ՛ իրենց գերիշխանութեան պահպանման նկրտումներուն մէջ եւ թէ՛ տարածաշրջանի գաղութատիրական արտոճակներ ունեցող երկիրներուն սաղորանքները դիմադրելու իմաստով:

Դ) Հայաստանի մարդասիրական այս օժանդակութիւնը ուղղուած է յատկապէս Սուրիոյ ժողովուրդին, որուն անբաժանելի մէկ մասն է սուրիահայ համայնքը՝ անոր հետ մաքառած, պատերազմի միեւնոյն դառն բաժակէն ըմպած եւ հակառակ այս բոլորին, կրօններու, քաղաքակրթութիւններու եւ ազգերու համերաշխ գոյակցութեան մեծագոյն օրինակը հանդիսացած:

Հայաստանն ու հայութիւնը, ընդհանրապէս, խաղաղութեան, տագնապներու քաղաքական լուծման ջատագովը եղած են: Անոնք մշտապէս հաւատացած են, որ խաղաղութիւնը նախ եւ առաջ կը թելադրէ երկխօսութիւն եւ պետութիւններու գերիշխանութեան իրաւունքի պահպանում:

Այս իմաստով Հայաստանն ու հայութիւնը Միջին Արեւելքի զանազան շրջաններու տագնապներու յաղթահարման մէջ դրական ներդրածութիւն ունեցած են, մին՝ իբրեւ պետութիւն, միւսը՝ իբրեւ Միջին Արեւելքի մէջ կառուցողական ներկայութիւն ունեցող փոքրամասնութիւն:

Այս բոլորին լոյսին տակ պէտք է արժեւորել Հայաստանի մարդասիրական օժանդակութեան խիզախ քայլը: Զայլ մը, որ առաջինը չէր, այլ շարունակութիւնն էր սուրիական տագնապի ողջ ընթացքին Հայաստանի Հանրապետութեան գորակցութեան եւ Սուրիա առաջած օժանդակութիւններուն: Փաստօրէն Հայաստան այն միակ երկիրն էր, որ պատերազմի տարիներուն Հալէպի մէջ բաց պահեց իր հիւպատոսարանը, այնպէս ինչպէս Դամասկոսի մէջ իր դեսպանատունը, գրկաբաց ընդունեց Սուրիոյ պատերազմին հետեւանքով Հայաստան հաստատուած սուրիահայերը եւ իր կարելին ըրաւ պարբերաբար օժանդակութիւններ ուղարկելու պատերազմի քուրային մէջ յայտնուած Սուրիոյ տագնապահար ժողովուրդին:

«Գ.»

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՄԱՍԼՈՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Իսրայէլի Քունէյթա քաղաքին ուղղութեամբ կատարած օդային յարձակումը սուրիական մամուլի այս շաբթուան գլխաւոր նիւթերէն էր, որուն անդրադարձաւ ՍԱՆՎ լրատու գործակալութիւնը: Աղբիւրը յայտնեց, որ Երկուշաբթի, 11 Փետրուար 2019-ին, Իսրայէլ հրթիռներ արձակեց Քունէյթա նահանգին ուղղութեամբ, արձանագրելով նիւթական վնասներ:

Ռազմական աղբիւր մը ՍԱՆՎ-ին յայտնեց, որ յետմիջօրէի ժամը 18:30-ին, Իսրայէլ հրթիռներ արձակեց Քունէյթայի Թալ Տիւրի ճապաթաթ ալ հաշապ, ալ Տարիա եւ Խալէտ բլուրներուն ուղղութեամբ:

Աղբիւրը աւելցնելով ըսաւ, որ Իսրայէլեան օդանաւ մը 19:50-ին չորս հրթիռ արձակեց նաեւ Քունէյթայի պետական հիւանդանոցին ուղղութեամբ:

Մամուլին մէջ լուսարձակի տակ ամուսեցաւ Իտլիպի թղթածրարը եւս: Այս ծիրէն ներս, սուրիական «Ալ Ուաթան» թերթը յայտնեց, որ Թեհրանի իսլամական յեղափոխութեան յաղթանակին 40-ամեակին առիթով, Դամասկոսի մէջ, իրանեան դեսպանատունէն ներս տեղի ունեցած տօնակատարութեան ընթացքին, Սուրիոյ արտաքին գործոց փոխնախարար Այման Սուսան շեշտեց, որ Իտլիպ Սուրիոյ տարածքին անբաժանելի մասն է եւ անոր սահմաններուն մէջ ծագած հարցերուն լուծումը կախեալ է առարկայական պայմաններէ, որոնք կը նպաստեն «անկայուն» կացութեան վերջ



տալուն, սակայն Իտլիպի Սուրիոյ հսկողութեան վերադառնալու որոշումը քննարկումի առարկայ չէ եւ սուրիացիները պարտաւոր են երկրին պաշտպանը դառնալու:

Թերթին համաձայն, Սուսան դիտել տուաւ, որ սուրիական հողերուն վրայ որեւէ արտաքին ներկայութիւն յարձակում կը նկատուի, աւելցնելով, որ Ատանայի համաձայնութիւնը կը թելադրէ որոշ պայմաններ, ինչպէս՝ թրքական ուժերուն Սուրիայէն դուրս գալը եւ Սուրիոյ մէջ ահաբեկիչներուն տրուած աջակցութեան դադրեցումը:

Միւս կողմէն, թերթը յայտնեց, որ Իրանի արտաքին գործոց նախարար Մուհամմետ ճատուատ Չարիֆ իր լիբանանցի պաշտօնակից Ճըպրան Պասիլի հետ ունեցած հանդիպումին ընթացքին ըսած է թէ. «Սուրիոյ տագնապին քաղաքական լուծումը պէտք է ներառէ Սուրիոյ գերիշխանութեան, անոր ժողովուրդին միասնութեան ու տարածքային ամբողջականութեան պահպանումը եւ դուրս բերումը արտաքին այն ուժերուն, որոնք առանց Սուրիոյ կառավարութեան արտօնութեան Սուրիա խուժած են»:

Չարիֆ յայտնած է թէ. «Մենք որպէս արտաքին կողմեր, պէտք է դեկլարարի եւ ուղեցոյցի դեր կատարենք եւ սուրիացիներուն օգտակար դառնանք իրենց երկրին ճակատագրին տնօրինման մէջ»:

Իր կարգին Պասիլ շեշտած է. «Մենք համամիտ ենք Իրանին՝ Սուրիոյ տագնապին քաղաքական լուծումը ամենամօտ ժամանակամիջոցին իրականացնելու կարելիութեան գծով», դիտել տալով, որ Ասթանայի գործընթացը նոյնքան կարեւորութիւն ունի Լիբանանի համար, որպէս երկրին խաղաղութիւն ապահովող եւ սուրիացի տեղահանուածներուն տունդարձին նպաստող գործօն:

«Ալ Ուաթան»ի շեշտուն մէջ կը կարդանք նաեւ, որ Երկուշաբթի, 11 Փետրուար 2019-ին, Դամասկոսի մէջ Իրանի դեսպան ճատուատ Թուրքապատի Դամասկոսի իրանեան դեսպանատան կեդրոնէն ներս՝ Իրանի իսլամական յեղափոխութեան յաղթանակին 40-ամեակին առիթով ունեցած մամուլի ասուլիսին ընթացքին, պատասխանելով այն հարցումին, թէ ո՞ր փուլին հասած է Իրանի, Սուրիոյ եւ Իրաքի միջեւ եռակի համաձայնութեան նախապատրաստութիւնը՝ յատկապէս, որ Սուրիոյ մէջ ներկայիս վառելանիւթի տագնապ կը տիրէ, ըսած է. «Իրան պատրաստակամութիւն կը յայտնէ Սուրիոյ եւ Իրաքի հետ եռակի համագործակցութեան համաձայնագիր մը կնքելու քարիւղի եւ կազի ուղղութիւն մէջ», շեշտելով, որ Իրան կը շարունակէ գորակից կանգնիլ Սուրիոյ վերականգնումի աշխատանքներուն:

Եզրափակելով ան ըսած է, որ լուրջ աշխատանք կը տարուի երեք երկիրներուն միջեւ համագործակցութիւնը ամրապնդելու՝ վառելանիւթը ցամաքային եւ օդային միջոցներով հասցնելու համար:

Այլ ամուսով, «Ռուսիա Այսօր» կայքէջը կը յայտնէր, որ Յորդանանի թագաւոր Ապտալլահ Բ. Հունիսիէ իր պալատէն ներս, լրագրողներու եւ վերլուծաբաններու հետ ունեցած հանդիպումին ընթացքին շեշտած է Սուրիոյ տագնապին քաղաքական լուծման կարելիութիւնը, որ պիտի պահպանէ Սուրիոյ միասնութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը:

Ապտալլահ Բ. Յայտնած է, որ Յորդանան նախանձախնդիր է արաբական միացեալ աշխատանքին վերսկսելու՝ արաբ ազգին մարտահրաւերները դիմագրաւելու համար:

Լուրեր Հայաշխարհէն

ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ԶՆՎԱՄԵԱՅ ԾՐԱԳԻՐԸ

Երեքշաբթի, 12 Փետրուարին, Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան Ազգային ժողովին ներկայացուց կառավարութեան հնգամեայ ծրագիրը: Վարչապետը ըսաւ. «Մեր նպատակը ձեւակերպուած է Ազգային ժողովի ներկայացուցած ծրագիրին առաջին իսկ պարբերութեան մէջ: Յառաջիկայ հինգ տարիներուն՝ Հայաստանի կառավարութեան գործունէութիւնը ուղղուած պիտի ըլլայ Հայաստանի Հանրապետութեան մէջ բարձր արհեստագիտական, արդիւնաբերական, ինչպէս նաեւ բնապահպանական բարձր չափանիշերուն համապատասխան, արտահանումը խրախուսող մրցունակ եւ ներառական տնտեսութիւն կառուցելուն: Ասիկա կը նշանակէ, որ կառավարութեան հիմնական



հարցը համախառն ներքին արդիւնքի կառուցը փոխելն է այնպէս, որ հինգ տարի ետք մեր երկրի տնտեսութեան բառանշանները դառնան արհեստագիտութիւնն ու արհեստագիտական նորարարութիւնները: Խօսքը արդէն իսկ գոյութիւն ունեցող արհեստագիտութիւններու ընդարձակ կիրարկման, ինչպէս նաեւ նոր արհեստագիտութիւններու ստեղծման կամ առնուազան տնտեսութեան կազմակերպութիւնն ունենալու, ինչպէս նաեւ բարձր արհեստագիտական հմտութիւններու, արտարարանքի եւ ապրանքներու թողարկման, արտահանման եւ կիրարկման այնպիսի ծաւալներու հասնելուն մասին է, որ արհեստագիտարար այս մարգերը դառնան Հայաստանի տղնտեսութեան հիմնական բնորոշիչը», ըսաւ վարչապետ Փաշինեան՝ նշելով, որ խօսքը բոլոր արհեստագիտութիւններուն մասին է:

Անդրադառնալով Հայաստանի տնտեսութեան վարչապետ Փաշինեան յայտարարեց Հայաստանի մէջ համաժողովրդական տնտեսական յեղափոխութեան սկիզբը: Ան ըսաւ. «Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի բարձր անպիտուն է կ'ազդարարեմ Հայաստանի Հանրապետութեան մէջ համաժողովրդական, տնտեսական յեղափոխութեան սկիզբը: Հայ ժողովուրդը յաղթած է կաշառակերութեան, ամենաթողութեան, խըմբակային կառավարման դէմ պայքարին եւ հայ ժողովուրդը պիտի յաղթէ աղքատութեան, գործազրկութեան, խեղճութեան ու անգործութեան դէմ պայքարին»:

Վարչապետը դիտել տուաւ, որ կառավարութիւնը կ'որոշէր տնտեսական աճի քաղաքականութիւնը տնտեսական զարգացման քաղաքականութեամբ փոխարինելու ուղեգիծ:

Անդրադառնալով Հայաստանի եւ հայկական Սփիւռքի յարաբերութիւններուն վարչապետը ըսաւ. «Երբ որոշեցինք, որ Հայաստան պէտք է ունենայ Սփիւռքի Նախարարութիւն, դրդապատճառներէն մէկը այն էր, որ Սփիւռքի Նախարարութեան մէջ կ'իրականացուէին գործառնայն, որոնք տեղի կ'ունենային նաեւ այլ նախարարութիւններու կողմէ: Խօսքը կրթական, մշակութային, երիտասարդական, կազմակերպական գործառնայններու մասին է: Եւ ասոր փոխարէն, կարեւոր գործառնայններ, որոնք պէտք է իրականացուին սփիւռքի հետ յարաբերութիւններու տեսակէտէ, ըստ էութեան, չէին իրականացուեր»:

«Ես կ'ուզեմ արձանագրել, որ կառավարութիւնը մտադիր է իր կառուցին մէջ չունենալ Սփիւռքի Նախարարութիւն: Անոր փոխարէն վարչապետի աշխատակազմին մէջ մենք պիտի ունենանք Սփիւռքի գործերով գլխաւոր յանձնակատար, որ վարչապետին անուով եւ յանձնարարութեամբ պիտի վարէ Սփիւռքի հետ յարաբերութիւններու քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ վարչապետին յանձնարարութեամբ պիտի համակարգէ նախարարութիւններու աշխատանքը Սփիւռքի հետ յարաբերութիւններուն մէջ՝ միեւնոյն ժամանակ ապահովելով Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու բաւական բարձր եւ պատշաճ մակարդակ», յայտնեց ան:

Վարչապետին համաձայն, այս տրամաբանութեան մէջ կառավարութիւնը Սփիւռքի հետ յարաբերութիւն-  
Շար. 12 14

ՀՅԴ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ ԵՒ ԿԱՌՈՅՅԻՆ ՄԱՍԻՆ

Արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքով կառավարութիւնը կազմաւորուեց Սահմանադրութեան եւ օրէնքի կամայական մեկնաբանութեամբ հիմք ընդունելով առաջիկայում իրականացուելիք կառուցուածքային փոփոխութիւնների մտադրութիւնը, իսկ իրականում մի շարք նախարարութիւնների գործունէութեան չիմնաւորուած (սպասուելիք) դադարեցումը: Հակառակ իշխող ուժի հնչեցրած մօտեցումներին եւ յանձնառութիւններին՝ կառավարութեան ծրագիրը չի անդրադառնում քաղաքական համակարգի բարեփոխումներին, անմիջական ժողովրդավարութեանը, մամուլի եւ խօսքի ազատութեանը, ընտրական համակարգին, սուփըրվարչապետութեան վերացմանը: Մի կողմից անտեսել են խոստացուած բարեփոխումները, միւս կողմից՝ փորձ է արւում կառավարութիւնը փոխարինել վարչապետով գերկենտրոնացնելով կրօնգիտական կառավարման մարմին լիազօրութիւնները, ինչը կարող է վտանգել երկրի ժողովրդավարական զարգացման հեռանկարը: Ծրագիրը բաւարար անդրադարձ չի կատարել ազգային անվտանգութեան ապահովմանը, այդ թւում՝ Արցախի Հանրապետութեան ռազմաքաղաքական անվտանգութեան երաշխաւորման մեխանիզմներին: Բացթողումներ կան երկրի մշակութային, կրթական, գիտական զարգացման եւ Սփիւռքի հետ կապերի ոլորտներում: Նեոլիբերալ (նոր ազատական) գաղափարախօսութիւնից բխող, կրաւորական սոցիալ-տնտեսական քաղաքականութիւնը, հակասելով Սահմանադրութեամբ ամրագրուած սոցիալական շուկայա-

կան տնտեսակարգին, չի կարող Հայաստանում անհրաժեշտ տնտեսական զարգացում եւ սոցիալական արդարութիւն ապահովել: Ազգային արդիւնքի բաշխման եւ սոցիալական արդարութեան հիմնահարցերի անտեսումը մեծացնելու է հասարակութեան բեւեռացումը, խորացնելու է հարուստների եւ աղքատների



րի միջեւ գոյութիւն ունեցող անդունդը՝ վտանգելով հասարակութեան համերաշխութիւնը: Թեւեւ կառավարութիւնն իր առջեւ նպատակ է դրել իրականացնել «տնտեսական յեղափոխութիւն», սակայն ծրագիրը չի պատասխանում, թէ ի՞նչ է հասկացում այդ եզրոյթի տակ, ինչպէ՞ս է այդ «յեղափոխութիւնն» իրականացուելու եւ ի՞նչ արդիւնք է այն արձանագրելու: Տնտեսութեան տարեկան 5% ակնկալուող աճը, որն արձանագրուած է ծրագրում, բաւարար չէ կառավարութեան տնտեսական քաղաքականութիւնը յեղափոխական կոչելու համար: Ծրագիրը մշակուել է պատասխանատուութիւնից խուսափելու եւ հանրութեան հաշուետու չլինելու մօտեցմամբ՝ հակասելով իշխող ուժի բազմիցս հնչեցրած հուսատիացումներին: Ծրագրում բացակայում են կոնկրետ թիրախներ, հանրային կեանքի որակի բարելաւումը բնութագրող նպատակադրումներ եւ ժամկետներ, գերիշխում են դեկլարատիւ բնոյթի յայտարարութիւններ: Այն պարունակում է ներքին հակասութիւններ ունեցող բազմաթիւ մտքեր:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Սարմին արձանագրում է, որ կառավարութեան ներկայացրած ծրագիրը բաւարար նախադրեալներ չի ապահովում «Չարգանալ՝ չզիջելով» կենսական սկզբունքի իրացման համար, եւ այն գնահատում է ժամանակի մարտահրաւերներին ոչ համարժեք: Վերը նշուած ամփոփ գնահատականների մանրամասներն ու հիմնաւորումները ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Սարմինը կը ներկայացնի առանձին հարցազրոյցներով եւ իրապարակումներով:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Սարմին 12 Փետրուար 2019

ՀՅԴ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԸ ԶԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՑ ԵՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆԻՆ ՇԵՏ

ՀՅԴ Հանրային կապերու գրասենեակը կը հաղորդէ, որ ՀՅԴ Բիւրոյի նախագահ Արմեն Ռուստամեան, Բիւրոյի անդամ Արմեն Համբարձումեան եւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Սարմինի ներկայացուցիչ Իշխան Սահաբեյեան 12 Փետրուարին հիւրընկալուած են Հայաստանի մօտ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպան Սեյիտ Քազեմ Սաճատիի կողմէ: ՀՅԴ ներկայացուցիչները դեսպանին տեղեկացուցած են վերջերս տեղի ունեցած ՀՅԴ 33-րդ Ընդհանուր ժողովին արտաքին քաղաքական հարցերուն առնչուող կուսակցութեան մօտեցումները: Յիշուած է, որ «զարգանալ՝ չզիջելով» սկզբունքը Դաշնակցութեան համար եղած է եւ կը մնայ Հայաստանի հզօրացումի եւ Արցախի հարցի լուծման առանցքը եւ այս մեկնակէտէն կը բխին կուսակցութեան հիմնական մօտեցումները:



Հանդիպումի ընթացքին հանգամանալից կերպով քննարկուած են հայ-իրանական բարեկամական յարաբերութիւններուն ներկայ վիճակը, զարգացման կարելիութիւնները եւ հեռանկարները: Անդրադարձ կատարուած է նաեւ տարածաշրջանային եւ ներքաղաքական հարցերուն: Երկուստեք կարեւոր համարած են պարբերական հանդիպումներու անհրաժեշտութիւնը:

### ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ ԿՐ ՀՐԱԲԻՐԵՆՔ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԲԱՆԱՎԷԾԻ

ՀՀ մասնագիտական յանձնախումբերու համակարգող Արծուիկ Մինասեան լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին ըսաւ, որ Հայ-թրքական արձանագրութիւնները Արցախի կարգաւորման գործընթացին մէջ թուրքիան ներգրաւելու համար ուղիղ միջոց էին, այդ էր պատճառը, որ Սերժ Սարգսեանի օրօք Դաշնակցութիւնը դուրս եկաւ համախոհական կառավարութենէն: Ապա աւելցուց, որ հետագային ոչ միայն այդ արձանագրութիւններուն չեղեալ համարուելուն, այլեւ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով ընդունուած Համահայկական հռչակագիրին մէջ ամրագրուեցան ՀՀ-ի ազգային եւ պետական հարցերուն առնչուող պատկերացումները:

«Եթէ նախկին կառավարութիւններու ատեն վեճերը եղած են ներքին հարթակներու վրայ, ներկայիս, որպէս արտախորհրդարանական ուժ, նոյնը պիտի շարունակենք դուրսը», շեշտեց ան՝ պատասխանելով Դաշնակցութեան հասցէին հընչող մեղադրանքներուն:

Անդրադառնալով կրթութեան ոլորտին՝ Մինասեան յիշեցուց. «Առաջին անգամ «կրթութեան մասին» օրէնք ընդունուած է 1999-ին՝ ՀՀ անդամ Լեւոն Սկրտչեանի նա-



խածնունդէն, երբ ան կրթութեան եւ գիտութեան նախարարն էր: Այնուհետեւ կրթութեան ոլորտէն ներս ելեկտրոնային համակարգ ներդրուեցաւ, չինական դպրոց բացուեցաւ, վերանայուեցաւ «բարձրագոյն կրթութեան մասին» օրէնքը, թոյլ չտրուեցաւ, որ մասսայական կրճատումներ տեղի ունենան»:

Մինասեանի համաձայն, թէեւ Լեւոն Սկրտչեան 4 անգամ նախարար նշանակուած է, բայց երբեք չէ լիարժեքօրէն ժամկետի կէս տեւ-

ողութեան իսկ չէ մնացած այդ պաշտօնին վրայ: Դաշնակցական գործիչը անդրադարձաւ կրթութեան եւ գիտութեան նախարար Արայիկ Յարութիւնեանի ՀՀ-ի հասցէին հընչեցուցած խօսքերուն եւ զինք հրապարակային բանավեճի հրաւիրեց:

«Կը հրաւիրենք Արայիկ Յարութիւնեանը հրապարակային բանավեճի, մեր մասնագիտական յանձնախումբերը կան, թող գայ հրապարակային բանավեճի, տեսնենք, թէ ինք ի՞նչ ըրած է, ի՞նչ յանցանքով

մեզ կը մեղադրէ, մենք ի՞նչ ըրած ենք, մեր ըրածներն ինչպէս կը ներկայացնենք: Սա թող պարոն Յարութիւնեանը ընդունի որպէս հրապարակային առաջարկ», շեշտեց Մինասեան՝ ընդգծելով, որ Դաշնակցութեան քննադատութիւնը ցաւոտ է, բայց ոչ՝ չար:

ՀՀ Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթեանի համաձայն, գոյութիւն ունի այնպիսի տպաւորութիւն, թէ կառավարութեան որոշ ներկայացուցիչներ, որոնք մինչ այդ խօսքի, մամուլի ազատութեան ջատագովներ էին, իշխանութեան գալով, իւրաքանչիւր քննադատութեան կը պատասխանեն բուն ու ջղային կերպով:

«Երբ կը քննադատեն նախկին իշխանութիւնները, պետք է նախ հասկնան, թէ իրենք ինչ ըրած են: Երբ կ'ըսեն, թէ ոլորտը քարոքանդ եղած է, պետք է հասկնան, թէ իրենք քարոք քարի վրայ դրա՞ծ են, թէ ոչ: Կը կարծեմ, որ կառավարութեան ներկայացուցիչները պետք է ականջալուր ըլլան ինչո՞ր քննադատութիւններուն եւ չարձագանգէն քսելով, նախապէս այսպէս էր կամ այնպէս... Եթէ նախապէս ամէն բան լաւ եղած ըլլար, իրենք իշխանութեան չէին գար», ըսաւ ան:

### ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Կարօ Արմէնեան

Այսօր, ՀՀ Հայաստանի Գերագոյն Մարմինի հրապարակային ասուլիսով յայտարարուեցաւ, որ շուտով հանրութեան քննարկման սեղանին կը դրուի ՀՀ ընկերային-տնտեսական ծրագիրը իր համապարփակ ընդգրկումով: Հիմա, որ իշխանութիւնը հրապարակած է իրը – թէկուզ սահմանադրական նորմերու լուրջ խախտումներով – Դաշնակցութեան այլընտրանքային ծրագիրով հանրութեան դատողութեանը կը յանձնուին իրական եզրերը երկրի զարգացման հրամայականներուն: Այսուհետեւ մեր երկրի ժողովրդավարական գործընթացն է, որ պիտի տայ իր արդար գնահատականը:

Ճիշդ է, շատեր յուսախաբ են այսօր կարդալով իշխանութեան ծրագիրը: Յուսախաբ են մասնաւոր անոնք, որոնք «յեղափոխութիւն» կը ծանուցէին, երբ մենք կ'ըսէինք, թէ եղածը ընդամենը իշխանափոխութիւն էր եւ թէ յեղափոխութիւնը դեռ պիտի գար, եթէ նոր իշխանութիւնը ուզէր բերել զայն... Իսկ իշխանութիւնը այրն: Վարչապետին բերնով կը պնդէր, թէ յեղափոխութիւնը արդէն աւարտած էր... Կառավարութեան ծրագիրով իշխանութիւնը այժմ կ'ըսէ մեզի, որ յեղափոխութիւնը պիտի չգայ: Ան չէր եւ պիտի չըլլայ իշխանութեան նպատակը: Այս իշխանութեան բնոյթը պէտք է փնտռել իր ծրագրի նորմերուն մէջ:

Հիմա, որ խաղաքարտերը բացուած են, եւ կ'ուզեմ ըսել, որ իշխանութեան այս ծրագիրով ալ իշխանութիւնը կրնայ շատ բան իրագործել մեր երկրին եւ մեր ժողովուրդին համար: Յեղափոխական յաւակնութիւններու կարիք չկայ: Կարիք չկայ մասնաւոր հանրութիւնը յեղափոխա-

կան լուրջութեամբ ապակողմնորոշելու: Կարելի է, որ իշխանութիւնը արագօրէն ամբողջացնէ կառավարութեան կազմը եւ անոր մէջ ներառուին լուրջ եւ տաղանդաւոր ուժեր եւ իշխանութիւնը դադրի հանրութիւնը զբաղեցնելէ փոքր եւ անընդհատակ խնդիրներով, ինչպէս Ազգային Օրինագրէն ու Դրօշը աղաւաղելու տիւնար մարզանքներն էին:


Ես վստահ եմ, որ իշխանութեան շարքերուն մէջ այսօր ընթացք առած է իրական գործի խաղաղաշտէն սորվելու դրական՝ հրամայական գործընթաց մը: Պէտք է արագացնել այդ կորագծի թափը: Դաշնակցութիւնը յստակ ըրած է սկիզբէն իսկ, որ հոն ուր ճիշդ ուղիի վրայ կը գտնուի կառավարութիւնը, Դաշնակցութեան գործակցութիւնը պիտի ըլլայ անվերապահ: Բայց հոն, ուր խոտորումներ կը գործեն, Դաշնակցութիւնը պիտի գործէ իր ծրագրի յանձնառութեամբ:

Կենսական կարեւորութիւն կը ներկայացնէ այսօր այն, որ ՀՀ քաղաքական բեմը սորվի անաւելագոյն արդիւնաւորութեամբ տեր կանգնիլ արտախորհրդարանական ընդդիմութեան փաստին:

Ասիկա նոր իրականութիւն է, որուն վերա-

հասու պէտք է ըլլայ մասնաւոր գործադիր իշխանութիւնը: Մասնաւոր այրն: Վարչապետը՝ ինք: Վարչապետ Փաշինեանի՝ ՀՀ Բիւրոյի հանդիպման առիթով արտայայտուած մտքերը պէտք է մտազգութեան տրուին:

Սահմանադրութիւնը կենդանի օրկանիզ է որեւէ ժողովրդավարութեան մէջ: Իմաստուն քաղաքական ուժերն են, որոնք նոր իմաստով կը հարստացնեն սահմանադրութեան կէտքը: Դաշնակցութեան այլընտրանքային ծրագիրը, ըստ երկրի, հրաւեր մըն է բոլոր քաղաքական ու-



ծերուն մեր երկիրը տանելու դէպի նոր ուժակաւորութիւն, դէպի նոր ինքնավստահութիւն, դէպի նոր լինելիութիւն: Ան կը ձգտի մեր հաւաքական ուժերու միաւորման: Ան կը ձգտի Հայաստան երկրի լիարժեք գերագանցութեան:

Սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր, Դաշնակցութեան կողմէ, կառուցողական ընդդիմութեան գործընթացը արդէն իսկ ճամբայ ելած է ի ծառայութիւն եւ ի փառս մեր ժողովուրդին: Բարի երթ բոլորին: Բոլորին անխտիր եւ Տեր ընդ մեզ:

## ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶՐՈՅՑ ԴՆՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒՀԻԻ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ



Խաժակ Մկրտիչեան

**«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը պիտի խրախուսէ տարբեր հարթակներու վրայ կանանց առաւել շօշափելի ներկայութիւնը»:**  
**ՀՅԴ 33-րդ Ընդհանուր Ժողով**

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութեան որեւէ ժամանակահատվածում այն յառաջատար դերակատարութիւնը, որ հայ կինը, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ընդմէջէն, ունեցած է հայ ազատագրական պայքարին մէջ: Մանաւանդ, եթէ առարկայականօրէն նկատի ունենանք կնոջ տեղին ու դերին մասին տուեալ ժամանակին տիրող մտայնութիւնը:

Առանց շատ ծանրանալու անցեալին վրայ, պէտք է յայտնել, որ քիչ չէ թիւը դաշնակցական այն հայուհիներուն, որոնք իրենց գաղափարակիցներուն կողքին, զէնք ի ձեռքին մարտնչած են ազատութեան ու արդարութեան համար եւ իրենց արժանաւոր տեղը գրաւած են հայ ազատագրական պայքարի հերոսներու կշարքին: Սօսէ Մայրիկ, Ռուբինա ու Խանըմ Ռասոլէլէնեան, պարզապէս ծանօթ անուններն են այն շեշտուած դերին, որ ստանձնած էր հայ յեղափոխական կինը: Ի վերջոյ, հիմք ունէր երգով արտայայտուած այն հաստատումը, որ կ'ըսէր.

«Քնքուշ կեանքը ծանր էր թուում հայ օրհորդին,  
Չէնքը ձեռքին յորդորում էր հայոց քաջերին»:

Ունակ կարեւոր էր դաշնակցական ընկերուհիին մտաւորական տեղն ու դերը: Իր ժամանակի յառաջադէմ մտաւորական Չապէլ Եսայեան, վայելելով յառաջադէմ մտաւորական դաշնակցականներու աջակցութիւնը, օրին կը բարձրաձայնէր. «Կինը աշխարհի չէ եկած միւսակ հասնելի ըլլալու համար: Կինը եկած է իր խելքը, մտային, բարոյական եւ ֆիզիքական յատկութիւնները զարգացնելու համար»:

Իր այս համոզումներուն հաւատարիմ ըլլալով է, որ Չապէլ Եսայեան 1919-ին, մաս կազմեց Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան եւ իր մասնակցութիւնը բերաւ Խաղաղութեան համար գումարուած խորհրդածողովներուն:

Մէկ խօսքով, պատմական փաստ է, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իբրեւ յառաջադէմ գաղափարական շարժում, միշտ յառաջ անցնելով ժամանակի չափանիշներէն, ընդգծուած ու կարեւոր տեղ վերապահած է հայ կնոջ, զայն ընդգրկելով ազգային ազատագրական պայքարի, քաղաքականութեան, գրականութեան, մշակոյթի, կրթութեան եւ հասարակական բնագաւառներուն մէջ: Միեւնոյն ժամանակ, անհրաժեշտ է խոստո-



Rostom with Bulgarian-Armenian Ungeruhis in 1893

ալ արժանացաւ ուշադրութեան ՀՅԴ 33-րդ Ընդհանուր Ժողովին, որ անվարան կ'ընդգծէր. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը պիտի խրախուսէ տարբեր հարթակներու վրայ կանանց առաւել շօշափելի ներկայութիւնը»:

Ընդհանուր Ժողովի բարձրութենէն արձակուած այս որոշումը ինքնին պարտաւորեցնող է ՀՅԴ կազմակերպական բոլոր մակարդակներուն վրայ: Այս որոշումին առաջին ու կարեւորագոյն հասցեատերը, նոյնիսկ կուսակցական մարմիններէն ու ժողովներէն առաջ, անհատ դաշնակցականն է, որ կոչուած է բոլոր ուժերով լծուելու իր գերագոյն ժողովի որոշումներուն գործադրութեան: Այդ որոշումին գործադրութիւնը կը սկսի այն գիտակցութենէն, որ դաշնակցական ընկերուհիի դերին բարձրացումը կը նկատուի իրաքանչիւր դաշնակցականի ուսերուն դրուած կարեւոր պարտաւորութիւնն է պէտք է աստիճանաբար հրաժարիլ կնոջ դերը սահմանափակող բոլոր տեսակի կարծրատիպերէն ու անմիջական շրջապատին մէջ, սեփական օրինակով՝ հայ կնոջ մղել քաղաքական ու կազմակերպական կեանքի աւելի աշխոյժ մասնակցութեան: Որովհետեւ, միայն այդ աշխոյժ մասնակ-

## ՏԵԱՌՆՆԴՒՌԱԶԻ ՏՕՆԸ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ



Խորեն Բիւյ. Պէրթիզեան

Տեառնընդառաջը քառասուրեայ Յիսուս մանկան տաճար ընծայումի տօնն է: Տեառնընդառաջը բառը կը նշանակէ Տիրոջ առաջ երթալ: Տաճար ընծայելու օրէնքը հաստատուած էր Հին Ուխտին մէջ: Ղուկաս անտարանիչ Ղեւտացոց գիրքին մէջ գրի առնուած ընծայման

ները), Զրիստոսի անտաբեր ծնընդեան առիթով կը հանդիպինք լուսաւոր դէմքերու: Անոնք աստուածային տնօրինումով Զրիստոսի երկրաւոր կեանքի առաջին փուլին մէջ յատուկ դերակատարութիւն ունեցան, մաս եւ բաժին բերին փրկութեան ծրագիրին մէջ եւ հանդիսա-



ցան Տիրոջ վկաները: Անոնք արժանի եղան զԶրիստոս տեսնելու: Աստուածամերժ կեցուածքներ կային, բայց ինչպէս մարգարէն կ'ըսէ. «խաւարի մէջ պտտող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ» (Ես 9.2): Այդ սքանչելի լոյսին հաղորդ դարձան Սիմոն ծերունին եւ Անա մարգարեուհին:

Տաճար ընծայումը բարեպաշտական արտայայտութիւն է:

Երախտագիտական զգացումներով զԱստուած փառաւորելու օրինաբեր առիթ է

օրէնքին մասին անդրադարձ կը կատարէ եւ կը մէջբերէ 12-րդ գլխուն մէջ արձանագրուած հետեւեալ պատուերը. «Տիրոջ պէտք է Նուիրուի ամէն արու գաւակ, որ մօրը առաջին գաւակն է»: ինչպէս նաեւ Տիրոջ Օրէնքին համաձայն զոհ մատուցանել «գոյգ մը տատրակ կամ աղաւնիի երկու ծագ»: (Ղկ 2.23-24) Յովսէփն ու Մարիամը Նորածին մանուկը Երուսաղէմ կը տանին Տիրոջ ընծայելու համար: Այդ օրերուն Սիմոն անունով «արդար եւ աստուածավախ» մարդ մը կ'ապրէր: Սուրբ Հոգին վստահեցուցած էր զինք՝ թէ Տիրոջ Օծեալը չտեսած պիտի չմեռնէր: Ան տաճար կ'երթայ, կը տեսնէ մանուկ Յիսուսը, իր գիրկը կ'առնէ զայն եւ գոհաբանական աղօթք կը մատուցէ: Աղօթքին մէջ յատկանշական է լոյսի գաղափարը, որ գործապէս շեշտուած է, ցոյց տալով թէ Զրիստոս ա'յն լոյսն է, որ յայտնուեցաւ մարդկութիւնը փրկելու նպատակով: Տաճար ընծայման դէպքին մէջ յիշատակուած է Փանուելի աղջիկը՝ Աննան: Ան յառաջացած տարիքով այրի մարգարեուհի էր: Տաճար նուիրուած էր: Ծումապահութեամբ եւ աղօթքով զԱստուած կը պաշտէր: Աննա մարգարեուհին Յիսուսին համար գոհութիւն տուաւ Տիրոջ եւ սկսաւ իր շնորհապատին տեղեկացնել թէ սպասուած փրկիչը արդէն աշխարհ եկաւ:

Տեառնընդառաջի տօնը:

Զրիստոսի լոյս ներկայութիւնը վայելելու եւ Իրմով տեսաբար առաջնորդուելու քաղցր իրաւէր է Տեառնընդառաջը: Հայ Առաքելական Եկեղեցին շարականներուն եւ աղօթքներուն ընդմէջէն յաւիտենական կեանքի տուիչը եւ անմահութեան աղբիւրը՝ զԶրիստոս կը գովէ «որովհետեւ տեղերուն տեղը երկինքէն երկիր իջնելով յանձն կ'առնէ իր ձեռագործներէն ընծայուիլ» (Շարական):

Հոգեպարար եւ խորհրդաւոր մթնոլորտ կը տիրէ եկեղեցիէն ներս: Օրուան ուսուցողական խորհուրդով կը մտաբերենք մարգարեաշունչ կանխասաց խօսքերը, որոնք ազատագրման բարի լուրը հաղորդող բացայայտ նշաններն են. «Աչքերովս տեսայ Փրկիչը, որ դրկեցիր բոլոր ժողովուրդներուն, որպէս լոյս՝ հեթանոսները լուսաւորելու» (Ղկ 2.30-32) Զրիստոսի անձին վերաբերող այս ակնարկութիւնը կ'ապացուցէ թէ Սիմոն ծերունին քաջ գիտեր փրկչին գալուստը կանուխէն պատմող նախանշաններն ու խոստումները, որոնք փոխանցուեցան մարգարէներուն միջոցաւ, «որովհետեւ մարգարէութիւնները բնաւ մարդոց կամքին ծնունդը չեն, այլ՝ Սուրբ Հոգիին մղումով է որ Աստուծոյ մարդիկը խօսեցան զանոնք» (Բ. Պտ 1.21):

Տեառնընդառաջի տօնը կը յիշատակուի 14 Փետրուարին, որպէս անշարժ տօն, այսինքն՝ Ս. Ծնունդէն (6 Յունուար) քառասուն օրեր ետք: Նախօրեակին, երեկոյեան ժամերգութեան ընթացքին տեղի կ'ունենայ նախատօնակի արարողութիւն,

## Թուրքիոյ նուրջ

### Թուրք-Յինսկան Յարաբերութիւնները Կրօն Լարուած են

«Յարաբերութիւն» կը հաղորդէ, որ թուրք-չինական յարաբերութիւններուն մէջ կրկին լարուածութիւն յառաջացած է Չինաստանի Սինցըզեան ինքնավար մարզին մէջ ապրող թրքական ծագում ունեցող ուղղութեան համայնքին պատճառով:

Լարուածութիւնը սկսած է Թուրքիոյ Արտաքին գործոց Նախարարութեան խօսակց Յամի Աքսոյի այն յայտարարութենէն ետք, որով ան չինական իշխանութիւններէն պահանջած է փակել Չինաստանի մէջ առկայ որոշ ճամբարներ, ուր կը պահուին ուղղութեան համայնքի մեծաթիւ ներկայացուցիչներ:

Աքսոյ այդ ճամբարները որակած է «համակերպողական ճամբարներ»:



բարներ», ուր կալանքի տակ կը գտնուին բազմաթիւ ուղղութեան, որոնք ըստ Նախարարութեան՝ կ'ենթարկուին կրօնական, քաղաքական ճնշումներու եւ ծուլումի քաղաքականութեան:

Աքսոյ յայտնած է, որ այդ ճամբարներուն փակման պահանջը Թուրքիոյ կողմէ կրկին ներկայացուած է, երբ անոնցմէ մեկուն մէջ, իբրեւ թէ, սպանուած է ուղղութեան հանրածանօթ աշուղ Ապտուլ Ռեհիմ Յեյթ:

Ի պատասխան Թուրքիոյ մեղադրանքներուն՝ Չինաստանի Արտաքին գործոց Նախարարութենէն յայտնած են, որ թրքական կողմին յայտարարութիւնը ամբողջովին սուտ է եւ իրականութեան չի համապատասխաներ: Չինական կողմը նախ ընդգծած է, որ այն ճամբարները, որոնց մասին խօսած էր Թուրքիոյ ԱԳՆ-ի մամլոյ խօսակը, բնաւ «համակերպողական ճամբարներ» չեն, աւելին՝ անոնք կը նպաստեն, որ ուղղութեան որոշ ներկայացուցիչներ հեռու մնան ահաբեկչութենէն եւ համարկուին հասարակութեան մէջ:

Չինաստանի ԱԳՆ-ը նոյնիսկ ուղղութեան մասնակցութեամբ յատուկ տեսակի մը հրապարակած է, ուր ան կը գրուցէ լրագրողի մը հետ եւ կը պատմէ իր մասին: Ըստ չինական կողմին, տեսանիւթը նկարահանուած էր 10 Փետրուարին, իսկ ուղղութեան աշուղը ողջ է:

### Վախճանման 55 Ամեակ

## Այրուես Էր Վեհափառը...



Դոկտոր Գորի Ազեզեան

«Յարկ ի վերայ իմ կայ...», ըսած է Պօղոս Առաքեալ, մանաւանդ որ առիթը հոգելից է, յորելեարը Յայ Եկեղեցւոյ այն հոգեխօս դեմքերէն՝ որուն լուսազգաց կերպարը իբրեւ հայ հոգեւորական եւ հայ մարդ, կ'անդրանցի ժամանակին ու միջոցին սեղմ սահմանագծումները, ստեղծելով պերճագեղ տիեզերք մը ամբողջ, ուր որքան ալ վաւերական ըլլան կատարուած հաստատումները, նկարագրութիւնները՝ հարազատ, գնահատումները՝ արդար ու արժան, սակայն անզօր կը մնան բացատրելու այն ուղիսնահոս լոյսի ճառագայթումը, գոր կը բաշխուէր իբրեւ սեր, բարութիւն, համբերութիւն, ներողամտութիւն...:

Այդպէս էր Վեհափառը: Այսպէս կ'աւարտէ մայրս ամենօրեայ անհոյս դարձած իր յուշապատումները, ուր Վեհափառը միշտ տիրական ներկայութիւն է, շնչող ու կենդանի, պարզապէս ժամանակը չէ յաջողած ստուեր ձգել անոր պատմակերտ անձին ու անմեծ յիշատակին վրայ: Աւելին, Ան կը շարունակէ իր յանկուցիչ բարութենէն երանգ մը միահիւսել մեր սրբերուն, պայծառատես իմաստութենէն ուղիք մը միախառնել մեր մտքերուն, իր լուսաճաճանչ ոգիէն շող մը շաղխել մեր աչքերու ցուցին, խորունկ հաւատքէն հատիկ մը սերմանել մեր հոգիներուն մէջ, անպարագիծ էութենէն եւ հոգեկան արիւթնէն կաթիլ մը ցօղել մեր կամքին ու կորովին մէջ:

\*\*\*

Այդպէս էր Վեհափառը: Իր բարի ծնունդէն մինչեւ անընդհատ շնչումը, գորշ Փետրուարին հետ նոյնացած, Մարաշէն դէպի Յալէպ, յետոյ Անթիլիաս, որպէս Չարեհ Աբեղայ՝ 1935-ին ընդունած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի՝ առաջին հունձի ձեռնադրեալներէն ըլլալու պատիւը: Չորս տարիներ ետք, 1939-ին, Պելճիքայի մէջ բարձրագոյն կրթութիւն ստացած Չարեհ Վարդապետ, Կաթողիկոսութեան կողմէ գործուղուած է Սուրբ Թարթուս քաղաքը, գոր առաջին հաւաքավայրը հանդիսացած էր Ալեքսանտրէի սանճաքի գաղթական հայութեան: Այդ օրերուն, մայրս ութամեայ աղջնակ մը, ընտանեօք իրենց կարգին ապաստանած վրանաքաղաքը, Վարդապետին յայտնութիւնը իսկական բարիք մը դարձած է: Անձնուրաց նուիրեալը, իրեն վստահուած վարչական ու կազմակերպչական աշխատանքներէն վեր եւ անդին, անմնացորդ ծառայութեամբ բաժնած է իր ժողովուրդի գաւակներուն ցաւը եւ ջանացած է ամոքել գանոնք: «Վարդապետը հմայիչ էր, պարթեւահասակ, արծուատես նայուածքով, բարի ու խոնարհ, յաղթ

կաղնիի նման, կարծես ոգեղէն էակ մը ըլլար...», կը յուշէ մայրս գրեթէ մենախօսելով, որպէսզի անելի վերջ աւելցնէ:

«Իր ուղղակի միջամտութեամբ է, որ մեր անձնական կարգն ու յոյն կառնապանը ընտանիքին հետ ցամաքի ճամբով միացան մեզի Պէրուսի մէջ, ուր մենք հասած էինք Նախօրօք, ծովու ճամբով: Ան միշտ մեզի՝ գաղթականներու հետ էր, անջնջելի յիշատակներ ձգած է բոլորիս սրտերուն մէջ...»:

Այդպէս էր Վեհափառը: 1940-ին, Չարեհ Վարդապետ ընտրուած է Բերիոյ Յայոց Թեմի առաջնորդական Տեղապահ, 1943-ին՝ Թեմակալ Առաջնորդ:

Անվերապահօրէն անոր առաջնորդութեան տանկեց տարիները Թեմի դարաւոր տարագրութեան այն լուսասփիռ էջերէն դարձած են, որոնց մասին պերճախօսութեամբ վկայեն ոգեղնայն քարոզներն ու պատգամները, հայ դպրոցին, հայ լեզուին ու հայեցի դաստիարակութեան հանդէպ ցուցաբերած անչափելի նախանձախընդրութիւնը՝ որուն պսակը կազմած է Ազգ. Բարեն Եփփէ Ճեմարանի հիմնադրութիւնը, եւ սուրիական հայրենիքի ազգային անկախութեան կերտումի օրհասական օրերուն բացայայտած հայկեան ասպետական ոգին: Այս առիթով, թիւ 381, 2 Ապրիլ 1946 թուակիր նախագահական հրամանագրով՝ արժանացած է Սուրիական Արժանեաց Առաջին Կարգի շքանշանի, որուն տուգութեան պաշտօնական հանդիսութեան (9 Սեպտեմբեր 1946), Յալէպի կուսակալ իշխան Մուսթաֆա Շիհապի արտասանած իր պատմական խօսքին մէջ, ի միջի այլոց հաստատած է. «Այս ազնիւ համայնքը, ազնիւ դեկավարներ ունի, որոնք մեր յոյսերը ոչ մէկ ատեն ի դերել հանած են: Ուրախ եմ, որ այսօր հայրենիքը կը դեկավարէ մտաւորական ու սրբակենցաղ հոգեւորական մը, յանձնիս Չարեհ Վարդապետին, որ Յալէպ իր ժամանումէն ի վեր, սիրոյ ու եղբայրութեան, հաւատարմութեան ու միասնականութեան ոգի ներշնչեց բոլորին, գործելով ի շահ Սուրիական Յայրենիքին...»:

Մինչ այդ, վերոյիշեալ գաղթականութեան մէկ մասը արդէն վերահաստատուած էր Յալէպ. «Այդտեղ, Կիրակնուրբի ու Կիրակնօրեայ Պատարագներուն, Յայր Սուրբին հետ մեր նուիրական ժամադրավայրը՝ Սրբոց Բառասնից Մանկանց Մայր Եկեղեցին էր: Ան, աջակողմէն դատուն մէջ տեղադրուած առաջնորդական գահին շուրջ կը հրաւիրէր

մանուկներն ու պատանիներս, ուր կը նստէինք ծալլապատիկ, Յայր Սուրբին հայրական հովանաւորութեան տակ, անշշուկ ու անձանձորոյ կը հետեւէինք արարողութիւններուն, անոր անխռով մտերմութեամբ երջանիկ...», կը շարունակէ մայրս գորհունակութեամբ, հայեացքը սեւեռելով հեռուն, կարծեք փնտռելով Յայր Սուրբին արծուատես նայուածքը:

Այդպէս էր Վեհափառը: 1956-ի Փետրուար 20-ին, Չարեհ Եպիսկոպոս ընտրուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, ինքնանուիրումի նոր առաքելութիւնը դիմաւորելով վեհափառ վճռակամութեամբ եւ գերանձնական բացառիկ տոկոսութեամբ: Աւելորդ է այստեղ յիշել Երջանկայիշատակ Յայրապետին կաթողիկոսական եօթնամեայ ծառայութեան տագնապալի ու դժուարին տարիները, որոնք սակայն չկրցան մարել անոր սրտին ու սրտագրաւ նայուածքին քաղցրութիւնն ու բարութիւնը, ոչ ալ անոր էութենէն ջնջել Արարչին շունչը...:



ապացոյցը՝ այսօրուան մեր կեանքին մէջ շողացող Չարեհ Ա. Կ. ցանած ու սնուցած սիրոյ եւ միութեան հայավայել կենսընթացն է, ազգային ապրումի անոր անզուգական անհոյս:

\*\*\*

Այո՛, գորշ Փետրուարի սա հոգեխռով օրերուն, կամովին կ'ապաւիւնիմ մօրս յուշերուն. «Այդպէս էր Վեհափառը» - կ'եզրափակէ մայրս, «Սքանչելի հոգեւորական էր, սքանչելի մարդ էր, հեքիաթային անձնաւորութիւն մը, բայց... շուտ գնաց...»:

Ճիշդ է որ Յայոց Պատմութիւնը հայ գիրերու գիտարար Սուրբին վարքագիրը՝ Կորինը հռչակած էր Սքանչելի, ուրեմն Չարեհ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, որուն մէջ գարմանալի ներդաշնակութեամբ գուգորդուած էին հայ հոգեւորականը եւ հայ մարդը, իր ժողովուրդի գաւակներուն սրտերուն մէջ հռչակուած է Սքանչելի, կը մտածեմ իւրովի, եւ մօրս տամուկ աչքերուն մէջ թափանցելով՝ բուն փափաք մը կ'ունենամ գուցէ մէկ անգամ հանդիպելու Վեհափառին արծուատես նայուածքին...:

## ՍՏԱՅՈՒԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՆՆԵՐ

### «ԱԶԴԱԿ ԲԱՑԱՌԻԿ-2019»

«Ազդակ Բացառիկ» խմբագիր Արշո Պալեան իր «Նոր Հայաստան, Լիբանանահայ Զաղաքական Գործունեությունը» և «Աշխատանքային Ուղեկիցներ» խորագրերով խմբագրականով կը բանայ 354 էջանի գուճազարդ հատորը: Նոր Հայաստանի կայացումին առաջադրանքներ սփռնող կարևոր միջնաբերդին մեջ հայկական քաղաքական գործունեի վերականգնումին նպաստող աշխատանքներուն կապուած շատ կարևոր պատմաքաղաքական - իրադարձութիւններու վերաբարձում մըն է խմբագրականը: «Այս բոլորը կը նախանշեն փակուողէն դէպի բացուող տարին բազմաթիւ ուղղութիւններով նախապատրաստուելու հրամայականները», կ'ըսէ ան:

Թիւին առանցքը անցնող տարուան կարևոր իրադարձութիւններուն նուիրուած նիւթերն են: Յօդուածները ունին պատմաքաղաքական, տեղեկատուական, վերլուծական, գեղարուեստական ուղղութիւններ:

Յատկանշական է աշխարհագրական տարբեր վայրերէ աշխատակիցներու ներկայութիւնը՝ Լիբանանէն, Հայաստանէն, Արցախէն, Սուրիայէն եւ Սփիւռքի տարբեր շրջաններէն հեղինակներ:

Հայութիւն եւ Հայ Դատ բաժինը կ'ընդգրկէ 125 էջերու վրայ տարածուող 22 հեղինակներու ստորագրութիւն: Յակոբ Բագրատունիի 2019-ի հրաւերը՝ «Գիտակից Զննադատութիւն, Գործունեականացութիւն, Հաւաքական ճիգ» խորագիրով յօդուածը կը հրաւիրէ հաւաքական ճիգով վերաբարձելու մեր իրականութիւնը, նոր նախաձեռնութիւններու դիմելու, որպէսզի 2019-ն ըլլայ գիտակից քննադատութեամբ, գործունեականացութեամբ հաւաքական ճիգի տարի:

Յաջորդը Ս. Մահսերեճեանի «Տասնամեակներ Ետք Այսօրը Պետք է Դիտուի Իբրեւ Իսկական Բարեշրջման Մեկնակետ» խորագիրով յօդուածն է, ուր հրաւեր կայ իրաւ մտաւորականութեան դերակատարութեան վերականգնումին երիտասարդներ թրծել, խօսքի եւ խոստումներու փուլէն անցնիլ հայրենաշէն եւ ժողովրդակերտ գործի փուլ, ներքին եւ արտաքին գործունեութիւնները Հայաստանին եւ մեր ժողովուրդին ծառայեցնելու ունակութիւն ձեռք բերել:

Յաջորդը՝ Երեւանի մեջ Կայացած Ֆրանսախօս Երկիրներու Կազմակերպութեան 17-րդ Վեհաժողովի մասին է:

Արտակ Սարգսեան ստորագրած է՝ «2018. Հայաստանի Անհանգիստ 12 Ամիսները», Վ. Աւագեանի յօդուածը՝ «Յանուն Հայ Դրօշին Եւ Ըշմարտութեան», ուր կը խօսի մեր

խորհրդանշաններուն՝ քայլերգին, գիտականին եւ դրօշին մասին:

Քաղաքական վերլուծաբան Միքայէլ Հաճեան ստորագրած է «Որքան Հաւանական Է Պաքուի Նոր «Պլից-Քրիկը» Արցախի Դեմ» յօդուածը, զոր հեղինակը կ'եզրափակէ ըսելով. «Պաշտօնական Պաքուի սպասողական վիճակում է՝ անհամբերութեամբ օրեր ու ժամեր հաշուելով, թէ երբ Հայաստանում «Թաւշեայ Յեղափոխութիւն» լիակատար կը ձեւաւորի իր իշխանութիւնը, որից յետոյ միայն կ'որոշեն՝ գարկե՞լ, թէ չգարկե՞լ նոր «պլից քրիկի» կոչնակը»:

Սեդա Մարկոսեան-Խտըշեան կը խօսի յեղափոխութեան հրամայականին մասին՝ անդրադառնալով



Փառաքալ Մանուկեանի «Համբերութեան Պտուղները» գիրքին:

Խ. Տեր Ղուկասեան կը գրէ. «Հայութիւնը 21-րդ Դարուն Դեպի «Համահայկական Հասարակութիւն» նիւթին մասին, իսկ Վրէժ Արմէն՝ «Հանդուրժել, Ի՞նչը Հանդուրժել, Ինչո՞ւ Հանդուրժել»:

Աթենքէն Յովսէփ Պարագեան ստորագրած է «Վկաները Վկաներ Կը փնտռեն Բռնագրաւուած Հայկական Տարածքներուն Վրայ» յօդուածը:

Յակոբ Պալեան հայացուցած է «Լսել, Չգալ Եւ Մտածել Քաղաքական Մեծ Դեմք Եւ Բանի Սպասարկու Ժորժ Փոմփիտուի Հետ» գրութիւնը:

Ժագ Յակոբեան «Յօդուածներ Մը, Որ Տակաւին Կը սպասէ Իր Լիարժէք Արժեւորման» յօդուածով կը գրէ Արամ Մանուկեանի մասին:

Վահրամ Էմմիեան «Հայ Դատի Տարին» յօդուածով կ'անդրադառնայ Արցախեան շարժումին 30-ամեակին:

Նորա Արիսեան կը ներկայացնէ «2018-ի Արաբերէն Հրատարակութիւնները՝ Հայկական Թեմաներով»:

Յարութ Զեքիճեան Հայաստանի Հանրապետութեան 100-Ամեակին կ'անդրադառնայ իր «100 Տարի Առաջ՝ ՀՀ-ի Պաշտօնաթերթ «Չանգ»-ի 29 Դեկտեմբեր 1918-ի

Տարուան Վերջին Թիւը Եւ 1 Յունուար 1919-ի Թիւը» խորագիրը կրող յօդուածով:

Գ. Խ. ստորագրած է «Հարաւային Կովկասի Ժողովուրդների Ազգային Տեսլականները 100 Տարի Առաջ Եւ Յետոյ» յօդուածը:

Մեթր Գ. Տերտերեան «Վճիռի Մը 35-Ամեակը «Ժողովուրդներու Մնայուն Դատարանը», յօդուածով լուսարձակի տակ կ'առնէ Հայ Դատը:

Դոկտ. Հրայր Ճեպեճեան՝ «Փորձենք Խաղաղութիւնը Ընտրել» կ'անդրադառնայ խաղաղութեան արժէքին:

Հալեպէն «Գանձասար» խմբագիր Չարմիկ Պողիկեան վաւերագրական տուեալներով կը ներկայացնէ «Սուրիահայութեան Վերականգնումի Տարին»:

Առ Գաթրճեան կ'անդրադառնայ «Թրքական Գործօնը՝ Սուրիոյ Պատերազմի Ներկայ Փուլին» նիւթին:

Սալբի Գասպարեան «Յեղասպանութեան Կառուցուածքային

Մարիանա Պերթիզեան-Ղազարեան՝ Երեւանի-Երեւանի 2800-ամեակին կ'անդրադառնայ իր «Վարդաշէն Կ'երթամ... Երեւանի» գրութեամբ, Իսկ Սիրուն Սիսեմեան-Հաճեթեան «Երկրնորանքի Մը Առաջ» պատմուածքները կը ստորագրէ:

«Լիբանանահայութեան Ազգային Տարին» Գլխաւոր խորագիրին տակ հինգ բաժիններով նախ կը ներկայացուի «Լիբանանահայութեան Միամեայ Գործունեութիւնը» Սիւլվի Աբելեանի ամփոփումով: Այս յաջորդաբար՝ Պարագեաններու-Հաղորդագրութիւն ՀՄԸՄ-ի 100-ամեակի, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ ներկայացուած. Համագաղային 90-ամեակի հանդիսաւոր յիշատակում Հայաստանի մեջ, այնուհետեւ Մարտիկ Պողոսեան Ազգային կ'ըսէ. «Քաղաքապետութեան առաքելութիւնն է ժողովուրդին ծառայել եւ անոր կեանքը դիւրացնել առանց խտրութեան»:

Եւ վերջապէս Արշո Պալեան Վարդաշէն Խօշեանի հետ «Այնճարի Բարգաւաճման Ի Խնդիր» ճիգ Չենք Խնայել եւ Լիբանանի Մեջ Պիտի Ըլլանք Առաջին Ազգային Չբօսավայր Ունեցող Գիւղաքաղաքը» խորագիրով հարցազրոյց մը կը վարէ:

Նորա Բարսեղեան առանձին բաժինով մը կը ներկայացնէ «Ազգակ» ի տարին երկու խորագիրներով՝ «Սրընթաց Եւ Ապատեղեկատուութեամբ Յորդոն Լրատուադաշտին Մեջ Ընդդէմ Վրայ Մնալու Ընդդէմ» եւ «Ապագայ Լրագրողներ» ու Պատրաստութեան Վարժողական Ծրագիր»:

Կուսակցական Տարին գլուխին կը յաջորդէ Երեսփոխանական Ընտրութիւններ բաժինը: Արշո Պալեան կը ներկայացնէ Լիբանանեան Տարին «Համամասնական Դրութեամբ Երեսփոխանական Ընտրութիւններ. Նոր Խորհրդարան Առանց Կառավարութեան» խորագիրով:

Եղիա Թաշճեան Միջազգային Տարին բաժինով կը ներկայացնէ «2018 Միաբեւեռութեան Անկումը»:

Կնոջական բաժինի մեջ Շուշիկ Մալիսազալեան կը խօսի «Հայ Եկեղեցւոյ Մոռցուած ԾԵՄԵՐ, Աւանդութիւններ» ուն մասին:

Մանկապատանեկան բաժինով Շողիկ Տեր Ղուկասեան կը գրէ «Խաղալիքները դարերու ընթացքին» նիւթը:

Վարդիվառ Գասպարեան Մարգարեան բաժինով կը ներկայացնէ 2018-ի մարգաշխարհը՝ լիբանանեան, հայկական եւ միջազգային առումներով:

Վերջին գլուխով Ասպետ Մանճիկեան կ'եզրափակէ Բացառիկը՝ 2019-ին գուգադիպող տարեդարձներն ու ոգեկոչումները յիշատակելով:

Երախտարժան այս աշխատանքը մեզ իրագրել կը դարձնէ հայրենի աշխարհի նորութիւններուն, լիբանանահայ գաղութի առօրեային եւ ընդհանրապէս հայ կեանքը յուզող շարք մը հարցերու:

**Մարիանա Պերթիզեան-Ղազարեան**

ԲԱԽՏ



Գեորգ Յակոբյան

Համարձակ քայլերով ներս մտաւ, լայն ու երկար, վարդագոյն մետաքսեայ փողկապը քնքնութեամբ վիզէն հանեց, երկու ձեռքերով գանգուր, երկար եւ սեւ մագերը կոկեց ու մինչ բարեձեւ հասակը կիսով ծածկած սեւ բաճկոնը արագօրէն հանել կը փորձէր, աշակերտները իր կողմը վագեցին ու սկսան ողջագուրուիլ ու համբուրել զինք: Մեջքին փաթթուած աշակերտուհի-



ները չարգիլեցին զինք, որ շարունակէ իր քայլերը դէպի կախիչները, ուր փողկապը, բաճկոնն ու նրբիկ պայուսակը կախելէն ետք, բոլոր աշակերտները մէկ-մէկ համբուրեց:

Չէնիթ, որ տիկին Յելենին հետ անկին մը կեցած կը սպասէր դասապահերուն սկսելուն ու աշակերտներուն ծանօթանալուն, զգաց որ սիրտը տարօրինակ կերպով վերելաւ ու իջաւ, կրծքավանդակը բարձրացաւ ու երկա՛ր շունչ մը քաշեց: Ո՞վ էր այս գեղեցկուհին:

-This is Սիւզան, արեւելահայ աշակերտներուն ուսուցչուհին, - Չէնիթին հետաքրքիր նայուածքին պատասխան տալու համար ըսաւ տիկին Յելեն: She is from Yerevan.

Սիւզանն ու չորս կողմը հաւաքուած աշակերտները արեւելահայերէն խօսելով խանդավառութեամբ իրենց դասարանները բարձրացան: Կիրակնօրեայ դպրոցը երկու մասի բաժնուած է՝ արեւմտահայ եւ արեւելահայ աշակերտներու համար: Չարմանալիօրէն, արեւմտահայ աշակերտներուն թիւը շատ անելի քիչ է, քան՝ արեւելահայերունը: Տարուէ տարի տարբերութիւնը անելի անկերել կը դառնայ, որովհետեւ մէկ կողմէն Սփիւռքի արեւմտահայ գանգուածը կը հիւծի, միւս կողմէն Հայաստանէն արտագաղթը, արիւնահոսող վերքի նման կը շարունակէ կոտորել...:

Արեւելահայ աշակերտները դեռ հայախօս են, անոնց մեծ մասը վերջերս տեղափոխուած է Անգլիա, իսկ արեւմտահայ աշակերտներուն ջախջախիչ մեծամասնութիւնը հայախօս չէ, երբեմն ծնողները դժուարաւ դպրոց կը բերեն զիրենք: Այսինքն, վիճակը տխուր է...: Տխուր՝ բառին ամբողջական իմաստով:


Եթէ արեւելահայ իւրաքանչիւր դասարան 20 աշակերտ ունի, նոյն կարգի արեւմտահայ բաժանումը՝ առաւելագոյնը 7-8 աշակերտ: Որքա՛ն կը բարձրանայ դասարանին կարգը, այնքան կը նուազի աշակերտներուն թիւը:

Գալով փոխանցուած գիտելիքներուն եւ մեթոտաբանութեան, Չէնիթ տեղեկ չէր արեւելահայերէն բաժանումներուն օգտագործած ծրագիրէն, բայց շատ նեղուած էր ի տես արեւմտահայ բաժանումներուն մէջ օգտագործուող նիւթերուն որակին եւ մեթոտին: Արեւմտահայ աշակերտներու ուսուցիչներուն կէսէն անելին Միջին Արեւելքէն գաղթած, հանգստեան կոչուած, թերեւս ալ ուսուցչական փորձառութիւն եւ հայագիտական կրթութիւն չունեցող տիկիններէ կը բաղկանար: Տիկինները հոգուով սրտով կը փորձէին բան մը սորվեցնել, բայց անոնց կիրարկած մեթոտը հին էր, հին: Արհեստավարժ եւ ժամանակակից մօտեցում չկար: Օրինակ՝ պոտիկները հայերէն խօսիլ, հաղորդակցիլ չէին գիտէր, բայց քերականութեան լուրջ դասեր կ'ունենային՝ բայերու եղանակներէն սկսեալ, մինչեւ հոլովումները: «Սա պոտիկը, երբ հայերէնի տարրական իմացութիւնը չունի, ի՞նչ պիտի օգտուի սահմանական, ըրձական, հրամայական եղանակներուն եւ կամ ուղղական, հայցական, տրական հոլովներուն տարբերութիւնները իմանալով, իրեն ինչի՞ն է պետք այս ծանր քերականութիւնը, անելի գործնական պետք է ըլլան դասերը», ջղայնանալով կը մտմտար Չէնիթ:

Պոտիկները տխուր - տըրտում, անգլիական գերգարգացած սարքերով, խելացի գրատախտակներով (smart board) ով օժտուած դասարաններուն մէջ (ի միջի այլոց, խելացի գրատախտակներ օգտագործելը յաւելեալ վճարում կը պահանջէր, անոր համար ալ աշակերտները զրկուած էին զանոնք օգտագործելէ), առանց հետաքրքրութիւն եւ խանդավառութիւն ցուցաբերելու, մեքենականօրէն կը փորձէին հայերէն սորվիլ...: Կը սորվէին: Չէնիթ կը կասկածէր:

Բնականաբար շաբաթը մէկ օր դպրոց գալով եւ հայախօս աշակերտներու համար պատրաստուած ծրագրերէ օգտուելով, դժուար թէ այս պոտիկները հայախօս դառնային, մանաւանդ որ տան եւ անօրեայի մէջ ալ հայախօսութեան մակարդակը նուազած է արդէն: Հետեւաբար Չէնիթ կ'առաջարկէր, որ դպրոցին մէջ ոչ հայախօս աշակերտներու համար արեւմտահայերէն յատուկ կրթական ծրագրեր մշակուին, որովհետեւ կը հաւատար, որ այս բոլորին մէջ Սփիւռքի կրթական մարմինները, Հայաստանի Կրթութեան եւ Գիտութեան նախարարութիւնները մեծ ընելիք ու-

ԴԱՌՆ ՕՐԵՐԸ ՁՄՐԱՆ ՆԱԱՆ ԿՈՒ ԳԱՆ ՈՒ Կ'ԵՐԹԱՆ...



Մարեն Պապեան

Առաւօտեան ամէն ինչ խաղաղ էր, արեւին շողը սենեակին չորս դին տարածուելով կարծէք բարի լոյս կը մաղթէր ինձի: Չարմանալի աշխուժութեամբ արթնցայ այդ օրը՝ երկար ատեն է նման եռանդով չէի սկըսած օրս:

Նախքան սուրճ խմելս, քայլերս ուղղեցի դէպի պատշգամ: Ամբողջ ձմրան ընթացքին պատշգամ ելլելու փափաք չէի ունեցած: Ինչի՞նչ պետք՝ օդը պարզ կ'ըլլար ու հազիւ անկողինին մէջ քիչիկ մը ջերմութիւն ամբարած մարմինս անելի պաղի ենթարկելու կարիք չէի զգար: Այս օրը, սակայն, 7° ջերմաստիճանի բաւական ցուրտ օդը շատ հաճելի կը թուէր ինձի:

Անդրադարձայ, որ թաղին մէջ ուրախ մթնոլորտ կը տիրէր: Խանդավառութիւն՝ ամենուրեք: Յաւելեալ մանրամասնութիւններ ուշադրութիւնս սկսան գրաւել... դեռեւս նոր արթնցող դրացիները, անցորդները, զիրար «բարի լոյս» մաղթող խանութպանները... եւ տակաւին կը շարունակէի դիտել: Հոգիս կը գուարճանար տեսնելով այդքալորը: Հինգշաբթին անսովոր էր առնուազն ինձի համար: Արդեօ՞ք այդ բոլորը սեփական զգացումներ էին միայն, կամ նախորդ օրուան անտիսիւն հետեւա՞նքը կ'ապրէի պարզապէս: Վստահ որ այդպէս ըլլալու էր:

Հոգիս այդքան դրական ներուժով լեցուցած էր, որ երազներս անգամ ուրախութեան պատկերներէ կազմուած էին այդ գիշերը:

«Կարծես փողոցը կրկին՝ ներտասարդութեամբ լեցուցեցաւ», հարց կու տայի ես ինձի՝ տասնեակ անգամներ փառք տալով Աստուծոյ:

Անցեալ ամիս յատկապէս այդքան խաղաղ չընթացաւ: Քաղաքը տխուր մթնոլորտի մէջ էր, որ կողմ ալ ուղղուէիր *Իհիթիաթի* եւ կազի տագնապի նիւթերը կը լսէիր: *Իհիթիաթի*՝ զինուորական պահեստի ծառայողներուն հարցը որքա՞ն տրամադրութիւններ փճացուցած էր, որքա՞ն յոյսեր եւ ծրագիրներ խամրեցուցած: Այնուհետեւ, Սուրիական Բանակի Հրամանատարութեան կողմէ երկ հրապարակուած զօրացրումի հրամանագիրը, որ թէեւ կ'ընդգրկէր միայն 1981-ի եւ անոր նախորդող տարիներու ծնեալները, ժողովուրդին նախապատեմութեան ուրախ հոգեվիճակը մասամբ վերականգնած էր կարծէք:

Չէ, սա պարզապէս հրամանագիր մը չէր: Զրոջս կեանքն ալ վերականգնելու մեկնարկ մըն էր հաւանաբար, որովհետեւ երկու տարի սուրիական բանակին ծառայութիւնը ամբողջացնող քեռայրս ալ իր նախկին կեանքին պիտի վերադարձնէր:

Լուրը ներբեռնելու եւ անմիջապէս «Գանձասար» շաբաթաթերթին համար թարգմանելու ետք, մոքիս մէջ արդէն սկսած էի պատկերացը-

նել ընտանիքիս անդամներուն դեմքին վրայ ուրուագծուելիք անսահման ժպիտը՝ մտահոգութեան կընճիմներուն փոխարինող, հարագատներուս ուրախութեան արցունքները, տան ընտանեկան տաքուկ ու ճիշ մթնոլորտը եւ դեռ շատ անելիս...:

Քոյրս նախորդ երկու տարիներուն յաճախ ջանք կը թափէր չարտայայտելու իր սրտնեղութիւնը, սակայն անոր դէմքին արտայայտութիւնները կը մատնէին իր հոգի-



ին խորքը նստած տրտմութիւնն ու մտահոգութիւնը: Իբրեւ քոյր մխիթարական խօսքեր չէի գտներ այլեւս... բայց եւ այնպէս, կարողութեանս սահմաններուն մէջ, կը ջանայի անոր տրամադրութիւնը միշտ բարձր պահել:

Մեր նեղութեան պատճառը միայն քեռայրիս պարագան չէր: Մեզ մէ իւրաքանչիւրին սրտին մէջ խորունկ վերք մը բացած էր քրոջս չորսօրեայ աղջնակին կորուստը: Դեռ աշխարհ չէկած Վանին ընտանիքին ծանր վիճակին անդրադարձը կը կրէր մօրը արգանդին մէջ կծկուելով: Ան կարծէք մօր ներսիդին ապրելով կը զգար անոր դէպի ներս մղուող ու գողտրիկ տեղ մը որոնող տրտմութիւնը: Անոր թերակազմ մարմինը կարողութիւն չունեցաւ չորս օրէն անելի պայքարելու այս աշխարհին մէջ գոյատեւելու համար: Մինչ քրոջս առողջութիւնը վտանգի տակ էր: Բժիշկը իր կարելիութեան սահմաններուն մէջ ջանաց գէթ իր կեանքը փրկել: Եւ Աստուած իր ձեռքը երկարեց ու զինք առողջ վերադարձուց մեզի:

Քոյրս՝ Նանարը, երկու տարի տառապեցաւ: Ան շատ անգամներ միևնաճ կը գիշերէր, երբեմն լալով, երբեմն անքնութենէն տառապելով, շատ անգամներ մտահոգուելով, սակայն քաջաբար դիմագրաւեց բոլոր դժուարութիւնները:

Եւ ահաւասի՛կ հասաւ ուրախութեան, երկամեայ դառն ու տառապագին օրերը ետին ձգելու եւ քեռայրիս հետ միասին պայծառ աչքերով գալիք օրերուն նայելու պահը:

Յիրաւի՝ ամէն նեղութենէ վերջ լոյս մը կը բացուի:



## ԲՆՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ -4-



Լարա Արղիսյան

Յուրտ ձմրան եղանակին, առաւօտեան ամպամած երկնքին տակ, դատարկ փողոցի մը քարայտակին վրայ քայլերս կը նետեմ: Իւրաքանչիւր քայլ փոխիս կը կը զգամ ուղղութեանս հակառակ ուժգնութեամբ փչող ամպրոպը, որ կարծէք ափով կը հարուածէ դէմքս: Բայց դէմքս աւելի եութեանս հպելով կը ցնցէ ու ներշնչումներու լամբարին տակ կը վերակենդանանայ Մեծարեցի քերթուածին հետեւեալ տողը՝ «Համբոյրներ կու գան հովէն ու ծովէն»:

Կը մտածեմ, թէ քնարերգակը ինչպէ՞ս կը յաջողի մարդուն եւ բնութեան կայութիւնը կը կապկպէ: Ան լուսաւոր բառերով կը ներկայացնէ հովերուն ազդեցութեան տակ կատարող յուռթի դաշտերը, որոնց մէջ արածող ուլը պիտի խեղդուի:

Քերթուածին ամէն մէկ տունին մէջ Վարուժանի իւրայատուկ ձեւով, նոր կերպով կը քանդակէ տեսարանը: Բնական հոսում կայ բառերուն մէջ: Անցնող «հովեր»ուն հետ բանաստեղծը դաշտին բերած առատութիւնն ու խաղաղութիւնը կ'երգէ.

«Հովեր կ'անցնին,  
Չըմրուխտներով կը ծրփայ դաշտը անհուն»:



Եան յարաբերութիւնը նոր սահմանագիծի վրայ դնել, անկումային տրամադրութենէ զերծ մնալով աստուածացնել բնութեան մէկ տարրը եւ նրբօրէն ուրուագծել մարդ-բնութիւն յարաբերութիւնը:

Մեծարեցի իր քերթողութեան մէջ անպայման բնութեան տարր մը կը ցանէ, որպէսզի իր ապրումները, սերն ու երագանքը ցոլացնէ: Սիրոյ ուժը կը ժայթքի «ապրիմ-մեռնիմ» ծաղիկով: Անոր կը յաջողէ պատկերը մեղմիկ հովին, որ տերեւին կը շնչայ արտամտիկ անկեղծութեամբ.

«Ապրիմ-մեռնիմ մը ձեռքըս սիրոյս ճամբան ես ինկայ

Ա'հ, լըսեի՛ր, տերեւին հովը ինչեր կը հծծեր»:

Հովը կամ օդը երրորդ տարրն է բնութեան, որ երբեմն գեփիւմ մը, վերացական գաղափարի եւ դողողուն իղձերու թռիչք մը կ'ըլլայ, կամ փոթորիկ մը, որ իր սաստկութեամբ կը փչէ ու կ'աւերէ շրջապատը: Օդին կամ հովին կը միանան շունչ, երկինք, եթեր, կլիմայ եւ մթնոլորտ բառերը, որոնք իրենց յստակ ու պայծառ իմաստով գեղեցիկ պատկերներ եւ համանուագներ կը դրոշմեն ընթերցողին երեւակայութեան մէջ: Այս տարրը արտակարգ արժէք ու գոյն կու տայ քերթուածին:

Գեղապաշտ Դանիէլ Վարուժան «Յորեանի Ծովեր» բանաստեղծութեան մէջ գեղասքանչ դաշտերու պատկերներ կը գծէ: Միտքն ու երե-

Շիտը կ'երգէ թառած հասկի մ'օրորուն՝

Մինչ իր տակէն ցորեաններու մոլեգին

Ծովեր կ'անցնին,  
Հովեր կ'անցնին»:

Ամէն մէկ տունին սկիզբն ու վերջը կրկնող բառերը թէ՛ երաժշտականութիւնը եւ թէ՛ պատկերը կը շեշտեն:

Հովը ժխտական իմաստով հանդէս կու գայ Չարուհի Գալեմբերեանի «Երագս» բանաստեղծութեան մէջ: Ան կը փափաքի թիթեռնիկի վերածել իր հրաբորբ իղձերը, որպէսզի այրելով չմոխրանան, «հովերը» չանհետացնեն գիրենք ու միշտ «վառ» մնան իր խելայեղ, ոսկի երագները.

«Ա՛յս երագս իմ. մարմին չունիս անոր պէս՝

Որ մատներովս արգիլեմ քեզ այրելէն

Կը վախնամ որ վառ իղձերս հըրակէզ,

Մոխիր դառնան եւ քեզ հովերը ցըրունէն»:

Հովը երեք բանաստեղծներուն մօտ բազմազանութեամբ, տարբեր ձեւերու տակ կը ներկայանայ: Մեծարեցին քով կը ներկայանայ որպէս վերացական, գգուող ապաստան, Դանիէլ Վարուժանին մօտ՝ որպէս դիւթակէզ երանգ ու երեւակայութիւն բաշխող, իսկ Չարուհի Գալեմբերեանին մօտ՝ որպէս կործանող, աներող եւ քանդող տարր:

## ԽՆԴԻՐ-ԱՆՔԸ



Արհաւ Կապուտյան

Փողոցին մէջ կը քալի  
Անփոյթ ու հապճեպով  
Անծանօթ մը կեցուց զիս  
Եւ հարցուց ան խնդրելով.

- Եղբայ՛ր, ո՞ր է մզկիթը:  
Ժամ մը եղաւ կը փնտռեմ,-  
Ու լայն բացաւ իր անուրթ,  
Քրտինքը սրբեց ճակտէն:

Նայեցայ անոր դէմքին՝  
Շշմած, ապշած, վրդովուած  
Ե՞րբ դարձար դուն եղբայ՛ր իմ  
Ո՛վ անծանօթ, անաստուած:

Պատասխանդ որ առնես՝  
Թիկունքդ կը դարձնես  
Ու ետ չես նայիր դուն  
Միայն դեմդ կը տեսնես:

Ձգած ետեւդ անտէր  
Վայրկեանուան մը եղբայրդ  
Մտքիդ մէջ չի՞ հնչեր դեռ  
Այն ինչ պատուեց քեզ հայրդ:

Կը նայի դեռ ան դէմքիս  
Աչքերով իր բոցավառ  
Կը սպասէ պատասխանիս  
Ու ալ դարձած շնչասպառ:

- Մզկիթն այնտեղ է, գնա՛  
Փափաքներդ կատարեալ  
Ճշմարիտ եղիր, մի՛ մնար  
Մի՛ կոչեր զիս դուն եղբայ՛ր:



## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Կալուածոց Հոգաբարձութիւնը կը տեղեկացնէ Նոր Գիւղ շրջանի մառնաներու, խանութներու եւ գրասենեակներու յարգելի վարձակալներուն, որ կարելի է օգտուիլ Կալուածոց Հոգաբարձութեան ընծայած առիթնէն եւ **անձամբ ներկայանալ գրասենեակ** վճարելու իրենց կուտակուած վարձքերուն (քաղաքի տագնապի շրջանին 1/1/2013-էն 31/12/2016) **միայն կեսը**: Յիշեալ առիթը ընծայուած է մինչեւ **28 Փետրուար 2019**:

ՀՄԸՄ-Ի ՍՈՒՐԻՈՑ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՀՄԸՄ-Ի ՀԱԼԵՊԻ  
ՄԱՍՆԱԾԻՐԻ  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՄԸՄ-ի Հալեպի Մասնաճիւղի  
Անդամական 93-րդ Ընդհանուր Ժողովը

տեղի պիտի ունենայ 24 Փետրուար 2019-ին, առաւօտեան ժամը 11:30-ին, ՀՄԸՄ-ի Ընտանեկան Պարտեզէն ներս:

Աշակերտական Անկիւն

ՄԱՐԴԸ  
ՄԱՐԴՈՎ Է  
ԳԵՂԵՑԻԿ



Անժէլա Չաղլասեան

Կայքէջի մը վրայ հանդիպեցայ գրութեան մը, որ հետաքրքրութիւնս գրաւեց: Գրուած էր. «Երբ կին մը այլ կնոջ մէջ դրական բան մը նկատէ, թող արտայայտէ, թող ձերբագատուի ինքզինք գերադաս համարելու բարոյութիւն»: Այս խօսքը մեծ ազդեցութիւն թողուց վրաս: Պահ մը մտածեցի, որ մենք՝ իգական սեռի ներկայացուցիչներս, ինչո՞ւ իրարու լաւ խօսքեր չենք փոխանակել եւ ներքուստ գիրար քննադատելու ցանկութեամբ կը բարարուինք յաճախ:



Կը խօսիմք իգական սեռի նրբութեան մասին, բայց կը բարարուինք միայն խօսքով ու մեր վարմունքով նրբութեան շեշտը չենք արտաբերեր: Յաճախ կը կրկնենք, թէ պետք է օգնենք իրարու, բայց նեղիկ միջավայրիս մէջ իսկ կը նկատեմ, թէ մէկս միւսին օգնելու տրամադրութիւն չունինք: Ինչո՞ւ երբեմն չենք ընդունիր, թէ մեզմէ աւելի լաւը գոյութիւն ունի եւ պիտի ըլլայ, բնականաբար: Իւրաքանչիւրը իր աշխատանքին, իր ուսումին ճամբով կը կատարելագործուի: Ուստի, մեզմէ լաւն իսկ երբ մեր օգնութեան կարիքը ունենայ, օգնենք անոր, որովհետեւ գուրգուրալից մօտեցումը իգական սեռը յատկանշող նրբութիւն է:

Խօսելով, դասախօսութիւններ կարդալով, սեռերու հաւասարութիւն պահանջելով, բայց մեր մարդկային յատկանիշները ուրանալով տեղ չենք հասնիր: Եթէ մեր խօսածն ու լսածը գործի չվերածենք, չվանենք չարութիւնը եւ բարութեան պարգեւած հաճոյքը չապրինք լիովին, իգական մեր արժանիքները անհրապոյր կը դառնան:

Անձնապէս շատ կարեւոր կը համարեմ յարգանքը, մանաւանդ անկեղծութիւնը, կեղծ փառաքանքներէն գերծ մնալն ու առանց կաշկանդուելու մեր ուրախութիւնը, սերը, գայրոյթն ու բարկութիւնը արտայայտելը:

Իգական սեռի ներկայացուցիչներս յաճախ այնպիսի մանրութիւններով կը զբաղինք, որ այլոց հագուկապը, խօսակցութեան ձեւն ու յարաբերութեան եղանակը բամբասանքի առարկայ կը դարձնենք: Մեր բերնէն ելած խօսքն ալ «բերնէ բերան, կ'ըլլայ գերան...»:

Ազատամիտ համարուելու համար բարարար չէ արծարծել սեռերու հաւասարութեան հարցը: Նախ մենք գմեզ կատարելագործել սորվինք, մեր բարոյութիւններէն ձերբագատուիլ սորվինք, իրարու յարգել սորվինք, ըստայնմ մեծ-մեծ խօսքեր շարունակենք ասոյն ու անոյն: Մեր խօսքերն ու գործերը համապատասխան թող ըլլան ու մեր գեղեցիկ ներաշխարհը թող ցոլացնեն:

ՀԱՐՑԱՐԱՆ

Արմենակ Եղիայեան

Ստորեւ պիտի գտնէք հարցումները՝ հանդերձ իրենց պատասխաններով, սրտցաւ խմբագիրի մը, որ կ'ուզէ քիչ մը աւելին սորվիլ. մի՛ գայթակղիք, աշխարհի վրայ այսպիսին ալ կայ:

5.\*\*\*Գործարք, թե՞  
Գործառք:  
-Բառիս արմատը **ար** է, որ գրաբարեան **ար-ար-ի**, **ար-ա** (ըրի, ըրէ՛) ձեւերուն ալ արմատն է: Տե՛ս ունինք նաեւ «գործ-**ար-ար**»-ը:

**Գործարք**-ը ինչ-որ գործ մը ընելու կամ կատարուած գործի մը կ'ակնարկէ եւ **առնել** (prendre, to take) բային հետ գործ չունի:

**Ար** արմատով կազմուած են նաեւ՝ **արդար**, **գարդար**, **խաւար**, **կատար**, **հնար**, **ճարտար**, **մթար**, **յարդար**, **պատուար**, **վարար** եւ այլն, որոնք շատ հին բառերն են:

Նոյն արմատը կրկնուելով կու տայ նորագոյն բառեր՝ **ար-արած**, **ար-արիչ**, **ար-արողութիւն**, **գործար-ար**, **բարեր-ար**, **գեղծար-ար**, **կենար-ար** եւ շատ ուրիշներ:

6.\*\*\*Կոչ ըրած էր՝ անմիջապէս ազատ **արծակելու**, թե՞

Կոչ ըրած էր՝ անմիջապէս ազատ **արծակել**:  
-Ասի բոլորովին նոյնն է 4-րդին հետ (շար. 1-ին մէջ):

7.\*\*\***Առաւել** քան, թե՞  
**Աւելի** քան:

-Այս պարագային եւս արեւելահայերէնն է, որ կը ճնշէ ու կ'առաջնորդէ մեր միտքերը:  
Բաղդատէ՛ «Թորոսը **առաւել** աշխատունակ է **քան** Մարկոսը» եւ Թորոսը **աւելի** աշխատունակ է **քան** Մարկոսը»:

Մենք սովոր եղած ենք **աւելի**-ին: Հիմա սակայն կացութիւնը սկսաւ փոխուիլ:

Այս ներթափանցումները անխուսափելի են, եւ այս մէկը այնքան մտահոգիչ չէ:

8.\*\*\*29 Ապրիլ 2013-էն **մինչեւ** 22 Մայիս 2018, թե՞

29 Ապրիլ 2013-էն 22 Մայիս 2018:  
-Նման պարագաներով՝ **մինչեւ** նախադրութիւնը աւելի յստակութիւն, անմիջականութիւն եւ թելադրականութիւն կու տայ մեր խօսքին: Երկուքն ալ ճիշդ են, սակայն երկրորդը աւելի թելադրական է: Միայն թէ երկուքն ալ **անճաշակ** են:

Ասոր միւս ձեւը բոլորովին մոռացութեան տրուած է մեր գրողներուն կողմէ՝ արեւելահայ թէ արեւմտահայ, եւ հետեւեալն է՝ **29 Ապրիլ 2013-22 Մայիս 2018**: Ուրեմն բացառականին ու **մինչեւ**-ին փոխարէն պարագապէս **անջատման գիծ** մը դրի. այդ գիծը քերականական լեզուով **մինչեւ** կը նշանակէ:

Շատ ցաւալի է, որ անջատման գիծը ընդհանրապէս մոռցուած է ներկայիս, յատկապէս Սփիւռքի մէջ. իմ գիտցածներէս միայն «Նոր Յառաջ»ը, «Լուսաբաց»ն ու «Հորիզոն-գրական»ը բառերստեղծութիւն կը կիրարկեն գայն:

9.\*\*\***Իր մօր** անունով, թե՞  
**Մօր** անունով:

-Առաջինը աւելի թելադրական է:  
Կարելի էր գոնէ ըսել՝ **մօրը անունով**:  
Այստեղ **իր** ստացական դերանունին տեղ դրինք **ը** ստացական յօդը:

10.\*\*\*Սկսած է **մատակարարելու**, թե՞  
Սկսած է **մատակարարել**:

-Նոյնն է 4-րդին եւ 6-րդին հետ:

11.\*\*\***Չայն** ձերբակալեցին, թե՞  
**Չինք** ձերբակալեցին:

-Երկուքն ալ ճիշդ են, նայած տեղին ու պարագային:  
Այս հարցումը մաս կը կազմէ լեզուական-քերականական ընդարձակ գլուխի մը:  
Հիմա կու տամ օրինակ մը միայն.

ա) -«Ոստիկանները հալածեցին Թորոսը ու ի վերջոյ **ձերբակալեցին զայն**»:  
Այստեղ **զինք**-ի հարց չի ծագիր. ընդհանրական դերանունը **ան-զայն-անոր**... է:

բ) -Հիմա խօսքիս մէջ պիտի մտցնեմ ուրիշ մը եւս.  
«Ոստիկանները հալածեցին Թորոսն ու անծանօթ մը. անոնք ձերբակալեցին զինք, սակայն գալով միւսին՝ ձեռքէ հանեցին **զայն**»:

ա-ին մէջ **զայն** դրի, որովհետեւ, ինչպէս ըսի, մեր ընդհանրական դերանունը **ան-զայն-անոր** է: Ուրեմն արդարացումը այն է:

բ-ին մէջ ուրիշ օրէնք մը կը գործէ. կը գանազանենք մօտաւոր Գ. դէմքը եւ հեռաւոր Գ. դէմքը: Մօտաւոր Գ. դէմքը կը ներկայացնեն **ինք-զինք-իր**-ով, իսկ հեռաւոր Գ. դէմքը՝ **ան-զայն-անոր**-ով:

Թորոսին եւ անծանօթին միջեւ, Թորոսը աւելի անմիջականութիւն կը վայելէ, աւելի մօտիկ է մեր գիտակցութեան, ան մեզի համար «հոգեբանական ենթակայ» մըն է. ուրեմն՝ **զինք**: Միւսը հեռաւոր, օտար, անծանօթ ու խորթ է. ուրեմն՝ **զայն**:

(շար. 2 եւ վերջ)



## ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

### ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՆՈՒԹԻՒՆ



Խաչիկ Շահինյան

Մանուկներ ընդհանրապես սեր են հակում կը ցուցաբերեն արուեստներու նկատմամբ ու կը հրապուրուին ի տես այլատեսակ գեղեցկութեանց: Որովհետեւ իւրաքանչիւր երեխայ կը նկատուի փոքրիկ կամ սկսնակ արուեստագետ մը, որ տէր է տարբեր չափերով-համեստ կամ զօրաւոր-արուեստի կարելիութեան եւ շնորհներու: Նախահունտերը անհրաժեշտ հոգատարութեան եւ գուրգուրանքի արժանանալով կրնան ծլիլ, ծաղկիլ, ուռճանալ ու բեղմնաւորուելով հարստացնել մարդկային քաղաքակրթութեան գանձարանը գեղարուեստական մնայուն արժէք ներկայացնող յաւերժական գործերով: Իսկ հակառակ պարագային, երբ փոքրիկին համար չենք ապահովել առողջ միջավայր, յարմարաւետ պայմաններ, բաւարար եւ անհրաժեշտ խնամատարութիւն, անկազմադատապարտուած կ'ըլլայ մոռացումի, ծախողութեան ու կ'անցնի աննկատ, գրկուելով ինքնակերտումի, ինքնարտայայտութեան եւ ինքնարժեւորման ամեն պատեհութենէ:

Գեղեցկութիւնը (մարդոց, կենդանիներու, բնութեան, իրերու...) տարբեր երանգներով եւ արտայայտութիւններով կը շրջապատէ մարդս ամեն կողմէ, սակայն ամեն ոք այդ գեղեցկութիւնը չի գգար ու չ'ըմբռնում: Նոյն տարողութեամբ ու նոյն ձեւով: Ասիկա պէտք է վերագրել մանկութեան տարիներուն, երբ գեղեցկի հանդէպ հետաքրքրութիւնը, սերը եւ պաշտամունքը անհրաժեշտ քաջալերանքի ու հոգածութեան չեն արժանացած, ինչպէս նաեւ գեղարուեստական զգայարանը ու գեղագիտական ճաշակը հարկաւոր մշակում եւ զարգացում չեն ստացած: Անշուշտ այս վերաբերումը կը ցուցնէ բացայայտ անտարբերութիւն ու նոյնիսկ արհամարհանք մարդկային անհատականութեան գլխաւոր առանձնայատկութիւններէն մէկուն նկատմամբ:

Գեղագիտական կրթութիւնը գեղեցկի ընկալման եւ իւրացման դաստիարակութիւնն է: Այլ խօսքով՝ անկախ կ'ընդգրկէ գեղագիտական զգացումի մշակում, կարծիքի, ճաշակի ընդունակութիւններու, կարիքներու եւ պահանջներու ձեւաւորում, արուեստի բնագաւառն ներս թէ ընթացիկ կեանքի մէջ գեղեցկի ըմբռնման եւ արժեւորման վարժութիւն:

Գեղագիտական դաստիարակութիւնը պէտք է սկսիլ մանկական վաղ տարիներէն: Նախադպրոցական տարիքի երեխաներու մօտ հարկ է գարգացնել տեսնելու եւ լսելու, գեղեցկին ընկալելու եւ գնահատելու ունակութիւն: Այս ուղղութեամբ մեծ դեր վիճակուած է երգի, երաժշտական խաղերուն եւ

նկարչութեան: Գեղագիտական դաստիարակութիւնը մեր վարժարաններէն ներս պէտք է կիրարկել ուսուցման ընթացքին, յատկապէս լեզուի գրականութեան, երգի եւ նկարչութեան դասանիւթերու ավանդման միջոցին: Անհրաժեշտ են նաեւ արտադասարանային եւ արտադպրոցական աշխատանքները՝ ի մասնաւորի գեղարուեստական ինքնագործունէութիւնը:

Գեղարուեստական կրթութիւնը սերտօրէն կ'առնչուի մտաւոր, բարոյական եւ ֆիզիքական դաստիարակութեան հետ:

Գեղարուեստական կրթութիւնը կը սահմանէ այն գործելակերպը, որով կարելի պիտի ըլլայ մեր աշակերտները դաստիարակել՝ անմիջականօրէն օգտագործելով արուեստի տարբեր նախադրեալներ, նախանիւթեր եւ գործիքներ: Անիկա դաստիարակչական միջոց մըն է, որ ճամբայ կը հարթէ հասնելու մեր երեխաներու հոգիներուն, կը գրգռէ անոնց զգացումները, կը ձեւակերպէ ճաշակը, կը խրախուսէ այդ փոքրահասակներու յօրինողական մղումը: Միւս կողմէ՝ արուեստի կրթութիւնը կը հանդիսանայ այն պատուհանը, ուր կ'է կարելի է ներթափանցել փոքրիկի նկարագրին, մտքին, զգացումներուն, յոյզերուն եւ տազնապներուն մէջ: Այսպէս՝ գեղարուեստի կրթութիւնը դաստիարակութեան կերպ մըն է, որ կը նպատակադրէ մարդկային առողջ անհատականութեան կերտումը խարսխուած արուեստի եւ գեղագիտութեան ազնիւ ենթահողի վրայ:

Մեր վարժարաններէն ներս մատուցուող գեղագիտական կրթութիւնը կ'ընդգրկէ արուեստի գաւազան բնագաւառներ, օրինակ երգը, երաժշտութիւնը, գծագրութիւնը, գեղանկարչութիւնը, քանդակը, ձեռարուեստը, նաեւ ուղղակիօրէն կ'աղերսուի լեզուին ու գրականութեան իր տարբեր ստեղծող (բանաստեղծութիւն, թատրոն, ասմունք, պատմութեան վեպ...) ու մինչեւ իսկ կը կամրջուի գիտութեան այլագան ճիւղերուն: Ան այդ, արուեստի մշակումն ու աճեցումը չի սահմանափակուիր լոկ գեղագիտութեան կիւթի դասաւանդումով, այլ կը շրջանցէ գայն ներգրաւելու կրթական դաստիարակչական այն բոլոր աշխատանքներն ու միջոցառումները, զորս պէտք է օգտագործել արուեստի եւ գեղագիտական նպատակներու ի խնդիր:

Գեղագիտական կրթութեան անհրաժեշտութիւնը հարկ է շեշտել եւ գերազնահատել ոչ միայն գատորոշելու գեղեցկին ու վայելուչը, նոր-

բացնելու ճաշակներ, սրելու զգացումներ, հրահրելու մարդկային ապրումներ եւ գերաճեցնելու յոյզեր, այլ նաեւ յաջողցնելու մարդկային կեանքէն ներս մեծ կարեւորութիւն ներկայացնող դաստիարակչական բազմաթիւ հեռանկարներ: Կարճ խօսքով՝ գեղագիտական դաստիարակութեան մեծ պարտականութիւն վերապահուած է մարդկային նկարագրի եւ անհատականութեան կերտման ու ամրացման գործին մէջ:

Դասարանային աշխատանքները կ'օժանդակեն աճեցնելու եւ



բեղմնաւորելու աշակերտին ստեղծագործական կարելիութիւնները, որովհետեւ փոքրիկը կը ճգնի կանխապէս ձեռք ձգած իր ծանօթութիւններուն գումարել յաւելեալ գիտելիքներ եւ փորձառութիւններ, հասնելու գեղարուեստական նոր հնարքներու, արարիչ եզրայանգումներու: Փոխադարձաբար՝ գեղագիտական կրթութիւնը իր կարգին կը նպաստէ արտաբերելու եւ մշակելու փոքրիկին մտային եւ զգացական կարողութիւնները (սուր նկատողութիւն, գերիշողութիւն, ընդարձակ երեւակայութիւն, խորունկ իմացողութիւն), որպէսզի հնարաւորութիւն ստեղծուի գեղարուեստական ստեղծագործ աշխատանք արտադրելու: Արուեստի ճիւղերը նաեւ կը սատարեն առհասարակ մարդոց եւ մասնաւորաբար երեխաներու հոգիները գերծ պահելու ցնցումներէ, այլատեսակ ճնշումներէ, սեղմումներէ, վերիվայրումներէ, բեկումներէ, քանի իսկական եւ ազնիւ արուեստի արժանաւոր գործ մը առիթ կ'ընծայէ ձեռք բերելու եւ հանգստանալու դպրոցական ծանրաբեռն պարտաւորութեանց մտահոգութիւններէն, անձկութիւններէն, ինչպէս նաեւ ֆիզիքական (մարմնական), հոգեկան եւ ուղեղային (մտային) սպառնիչ յոգնութենէ:

Գեղարուեստի բնագաւառը իր տարբեր ստորաբաժանումներով միշտ ալ անքակտելիօրէն ընդլուգուած կը մնայ մարդկային խռովքներու, յուզումներու եւ պոռթկումներու հետ: Արդ, գեղագիտութիւնն ու արուեստը մարդոց ներաշխարհին ու հոգին բացայայտող ամենաձեռնուտու, ամենակենդանի, ամենարդիւնաւետ եւ ամենաարտայայտիչ միջոցներն են, որոնք գերազանցապէս կը շեշտեն մարդկային ինքնութիւնը եւ իւրայատուկ դիմագիծով կը դրոշմեն գայն:

Գեղարուեստի մարզէն ներս տարուած աշխատանքը սքանչելի եւ հազուադէպ առիթ մըն է՝ ազնուացնելու ու ծաղկեցնելու երեխաներու գեղագիտական զգայարանը, մարզելու եւ կատարելագործե-

լու անոնց ընդունակութիւնները: Արդարեւ, գեղագիտապէս դաստիարակուած փոքրիկը երբ գործ կ'ունենայ գոյներու եւ գիծերու հետ, իր գըննելու, համեմատելու ու գատորոշելու բարձր կարողութեամբ կը յաջողի ճշգրիտ ընտրութիւններ կատարել եւ երանգներու գեղեցիկ ու ներդաշնակ համադրոյթ մը ստեղծել, մատնելով արուեստի նրբագագ, բարձրաճաշակ եւ մշակուած հոգեխառնութիւն մը: Մինչ՝ մշակութապէս անտաշ միջավայրի մէջ հասակ նետած, նաեւ գեղարուեստական կրթութենէ անմաս մնացած անմըշակ պատանին երբ ականատես կ'ըլլայ հմայիչ պատարառի մը, կ'ունենալոր առիթնող եւ հաճոյալուր մեղեդի մը, կը հանդիպի ճարտարապետական հոյակերտ կոթողի մը, կամ ներկայ կը գտնուի հրապուրիչ եւ բարձրարուեստ բեմականացումի մը, ընդհանրապէս կը վերաբերի անտարբերութեամբ, որովհետեւ չի գիտակցիր ու չի թափանցեր անոնց գեղագիտական արժէքին, չանդրադառնար անոնց սքողած գեղեցկութեան ու չի կրնար գնահատել այդ ստեղծագործութեանց իսկական որակն ու կշիռը:

Եական է ուրեմն՝ ուսանողներու ազատ ժամերն ու արձակուրդի օրերը խելամտօրէն եւ լաւագոյնս զբաղեցնել, զանոնք մղելով երաժշտական եւ գեղարուեստական պարապմունքներու: Այսպէս, հանդարտ, հաճելի, քնարաշունչ եւ չըքնաղ մթնոլորտի մէջ, աշակերտներ կը թօթափեն իրենց դպրոցական խճողուած առօրեայի յոգնութիւնն ու տաղտուկը, կը փարատեն երկարատեւ արձակուրդներու առթած լճացումն ու ձանձրոյթը, մանաւանդ՝ առաւելագոյնս կը տնտեսեն իրենց պարապոյ ժամերը: Որովհետեւ այդ ժամերը եթէ արդիւնաբար եւ օգտակար ձեւով չ'ընդհանրուին, շատ մը անպատեհութիւններ եւ բարոյական սայթաքումներ ընթացք կ'առնեն ու կ'արտօսեն որ անմեղ երեխաներ բռնմէն շեղուին եւ ապականութեան խորտոր ուղին:

Արուեստները կ'աճեցնեն նաեւ՝ բծախնդրութեամբ ու ճշգրտօրէն դիտելու շնորհ, առարկայական քըննարկումի եւ դատողութեան հմտութիւն, խորատոյգ թափանցումի ու վերլուծման կարողութիւն, ինչ որ երեխան այլագան հրատարակութիւններ (գիրքեր, թերթեր, հանդէսներ) կարդալու, միաժամանակ թանգարաններ եւ արուեստի ցուցասրահներ այցելելու կամ գեղարուեստական միջոցառումներու հետեւելու կը մղէ: Աւելին՝ կ'ընդարձակէ մանկան մտաւորական ու երեւակայութիւնը, կը հարստացնէ անոր գիտելիքներն ու մտապաշարը, կը զարթնեցնէ գիտակցութիւնը, կը բազմապատկէ ծանօթութիւնները (պատմութեան, մշակոյթի եւ գիտութեան մասին), գեղարուեստը վերածելով յաւելեալ ընթերցանութեան եւ ինքնագարգացման առաջնորդող հրապուրիչ խայծի:

Անտարակոյս, մեր կրթական հաստատութիւններէն ներս պէտք է մեծ կարեւորութեամբ զարկ տալ գեղագիտական կրթութեան, ինչպէս նաեւ յատուկ գուրգուրանքի ու հո-

ՄՏԱՄԱՐԶԱՆԲ



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 284)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1								■				
2								■		■		
3					■						■	
4		■			■			■				■
5						■				■		
6		■			■				■			
7						■						
8		■	■					■	■			
9						■						
10	■			■		■				■		
11						■					■	
12			■		■					■		

Հորիզոնական

1. Դարման: Գիշերեն դեպի լոյս բացուող ժամը:
2. Կղերականի պծղնաւոր: Առարկայ:
3. Ճշմարիտ: Հիւթեղ պտուղ մը:
4. Տառի մը դրացիները: 5030: Տառի մը անունը:
5. Իգական անուն: Անձնական դերանուն: Տառի մը դրացիները:
6. 34: Կրկնուած ձայնաւորներ: Գրաբար՝ օր:
7. Երկբարբառ: Պտուղի կուտ:
8. Աղեղի թել: Հակառակ՝ 604:
9. Տառի մը անունը: Առարկայ: Արամ Հայկազի պատմութեան մասին ժողովածուն. «Չորս .....»:
10. Հակառակ՝ ցօղ: Արական անուն: Կերպասի լայնք:
11. Թիթեղ: Դրաստամատ Կանայեանի ծածկանունը: Հակառակ՝ ժըխտական նախածանց:
12. Փոքրացնող մասնիկ: Իգական օտար անուն: Տաքութիւն:

Ուղղահայեաց

1. Մարմնի անհրաժեշտ սնունդներէն: Պարտիզական գործիք:
2. Խումբ, դաս: Նառն:
3. Երջանիկ: Անձնական դերանուն:
4. Արեւմտահայ գրականութեան նահապետ հայրը:
5. Տառի մը դրացիները: Տարածքի միւտը:
6. Բարակ, նուրբ: Յոգնակերտ մասնիկ:
7. Հայոց Յեղասպանութիւնը ընդունող երկիր: Նոր:
8. Հակառակ՝ գոյութիւն ունին: Նշանաւոր որրամուլը:
9. Անըջանք, երեւակայութիւն:
10. Տառի մը անունը: Տարածքի միւտը: Տարի:
11. Տառի մը անունը: Հակառակ՝ անօգուտ, անպտուղ:
12. Հայոց Յեղասպանութեան զոհ գացած գրագետ:

Պատրաստեց Մարինա Զիւլբոյեան-Պողիկեան

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 284)

Տեղադրէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

			8	2				6
	1			3		8	7	
	3			4			1	
1		7		3	5		9	
		8				2	4	
	6			2				
		2		5		1	9	
6		1		7				
5			6	9		4		

ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 55)

Յովհաննէս Թումանեանի ստեղծագործութիւնները ջնջելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 10 տառերէ բաղկացած Թումանեանի հեքիաթներէն մէկը կը ներկայացնէ:

ի	բ	ա	խ	թ	ա	մ	ա	ր	օ
մ	ք	ա	ն	ե	ա	կ	ն	ե	ք
ե	դ	ա	ն	հ	ն	ւ	ն	ը	հ
ք	է	ա	ր	մ	ա	ր	օ	ն	ն
գ	պ	ե	լ	ն	ն	ե	ց	ի	ն
ը	ի	կ	ս	ա	ք	օ	ն	ե	ւ
ս	ա	ս	ն	ւ	ն	ց	ի	ն	թ
լ	ն	ւ	ս	ա	ւ	ն	ք	չ	ի
կ	ա	ն	թ	ե	դ	ը	դ	ա	ւ
հ	ի	ն	ն	դ	ա	ւ	ի	թ	ն

«Քառեակներ», «Լուսաւորչի Կանթեղը», «Լոռեցի Սաքուն», «Մարուն», «Դեպի Անհունը», «Հին Օրհնութիւն», «Իմ Երգը», «Ախթամար», «Սասունցի Դաւիթ»

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 283)

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 283)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	մ	ս	մ	ա	ն	ե	ք		ք	ա	ր	ն
2	ա	ր	ա		կ			մ	մ	ք	է	ն
3	ք	ա	ր	ւ	ն		ք	ա	ց			ն
4	ի	մ	ա		ւ		ա	կ	ա	ն		ե
5		ա	կ	ա	մ	ա	յ		մ	ա	ն	ք
6	ա	ն		ա	ի	ա	ր		ա		կ	
7	2	ի		ե	ա		է	ք		ա	կ	
8	ա	ր		ա		ա	ւ	ր		ն		ե
9	ա			ն	ե	ր		կ		ն		
10	ն	ե	ր		ք	ն	ե	ա	ա			ծ
11	ա		ւ		ա	ք	ա		ա	ն	լ	ի
12	կ	ա	ն	ր	մ	ը	ե	ր	ի	ի	ն	ք

1	3	9	2	4	5	8	6	7
5	4	6	8	9	7	1	3	2
2	8	7	6	3	1	5	4	9
9	5	1	3	2	6	4	7	8
3	7	2	4	5	8	9	1	6
4	6	8	7	1	9	3	2	5
7	9	5	1	6	4	2	8	3
6	1	3	9	8	2	7	5	4
8	2	4	5	7	3	6	9	1

ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 54)

Պահուած բառն է՝ «Հոսիոսի Ձեռատետրը»:



## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



**ԽՈՅ**  
Անակնկալ հանդիպումներ պիտի ունենաք աշխատանքի մարզին մէջ: Ձեր պատասխանատուութիւնները եւ պարտականութիւնները պիտի բազմանան:



**ՑՈՒԼ**  
Ընկերային ձեր յարաբերութիւններուն մէջ անլուծելի հարցեր պիտի լուծուին այս շաբաթ: Դրական շրջան մըն է, որուն ընթացքին ինքնավստահորէն պիտի աշխատիք:



**ԵՐԿՈՒՐԵԱԿ**  
Օգնեցէք ձեզի կարիք ունեցող բարեկամներուն, փոխարէնը պիտի արժանանաք անոնց վստահութեան: Անհասկացողութեան պարագային արդարացուցէք ձեր դիրքորոշումը:



**ԽԵՑՂԵՏԻՆ**  
Քաղաքի տագնապը շղագագիւղ դարձուցած է ձեզ: Համբերատար եղէք ու աստիճանաբար պիտի յաղթահարէք դժուարութիւնները: Գործի առաջարկ մը կրնաք ստանալ այս շաբաթ:



**ԱՌԻԾ**  
Պարզամիտ մի՛ ըլլաք, երբեմն բարի ձեւացող մարդիկ կրնան վնաս հասցնել ձեզի: Ձեր առողջութեան հոգ տարէք:



**ԿՈՅՍ**  
Այս շրջանին յաճախ կը տատամսիք ընտանեկան ձեր հարցերուն առընչուող որոշում գոյացնելու ընթացքին: Խորհրդակցեցէք ձեր կողակիցին հետ:



**ԿԵՒՈՔ**  
Ձեր գործերուն մէջ դժուարութիւններ պիտի յառաջանան: Պիտի պահեցէք ձեր ջիղերը եւ ըսի-ըսաներով մի՛ գբաղիք: Ծանր օրեր կ'ապրիք:



**ԿԱՐԻՃ**  
Նոր բարեկամութիւններ պիտի հաստատէք, ձեր ընկերային կեանքը պիտի աշխուժանայ: Մի՛ տատամսիք Նոր միջավայրերու մէջ մտնելէ: Համարձակ եղէք:



**ԱՂԵՂՆԱՒՈՐ**  
Սիրոյ տօնը խորհրդանշող Ս. Սարգիսի տօնին արժէքաւոր նուէր մը պիտի ստանաք: Ուրախ, սիրով հագեցած պահեր պիտի ապրիք:




**ԱՅԾԵՂՋԻՐ**  
Ձեր ընտանիքը պիտի բախտաւորուի Նոր անդամով մը: Նոր ծնունդի մը կը նախապատրաստուիք:



**ՋՐՅՈՍ**  
Առողջական հարցեր կրնաք ունենալ ցուրտ կլիմային պատճառով: Ձեր առողջութեան հոգ տարէք, մի՛ անտեսէք բժիշկին թելադրանքները:



**ՁՈՒԿ**  
Թշնամական կեցուածք պիտի ունենաք այս օրերուն: Ուշադիր եղէք եւ օրէնքները գանց մի՛ ընէք: Ներդրութիւն մը պիտի կրէք ձեր շուրջիներէն: Պիտի պահեցէք ձեր ջիղերը:



Սոնա Տէր Պողոսեան-Տարաքճեան

## ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ «ՄԱՐ ՍԱՐԳԻՍ» ԿԱՄ «ՏԵՐ ՍԵՐԳԻՈՍ»

Սարգիս Կեսարիոյ Գամիլը գաւառէն էր. հռոմեական բանակին մէջ քաջ ու առաքինի զինուորական մը: Ան համարձակութեամբ կը քարոզէր Աւետարանը եւ կը կործանէր բազիլներ ու մեհեաններ: Յուլիանոս Ուրացոյի օրով Սարգիս իր Մարտիրոս որդւոյն հետ ապաստանեցաւ Հայաստան, Տիրան թագաւորին քով: Անկէ անցաւ Պարսկաստան ու ծառայեց Շապուհի բանակին մէջ: Մեծ եղաւ իր եւ իր գաւկին ազդեցութիւնը իր հսկողութեան տակ դրուած զօրքին վրայ, որոնց մէջ քրիստոնէայ դարձողներ եղան:

Երբ պատանի Մարտիրոս (Ս.Սարգիսի որդին) ձերբակալուեցաւ թշնամի գունդի մը կողմէ, Ս.Սարգիս շատ տխրեցաւ եւ Աստուծոյ ապաւինելով երեք օր, գիշեր-ցերեկ անդադար առօթեց .միանգամայն խիստ պահք պահելով: Ան Աստուծոյ կ'ըսէր. «*Դուն ես իմ Աստուածս. եւ քու քովը տկարութիւն չկայ, Տէր իմ, Յիսուս Քրիստոս: Դուն կարող ես գիս փրկել իմ թշնամիներուն ձեռքէն, եւ ինծի տալ որդիս:*»



Չորրորդ օրը ժամը երեքին, տղան ազատ արձակուելով վերադարձաւ: Սարգիս եւ իր գաւակը արքայական հրաւեր ստացան արքունի մեհեանի մէջ գոհեր մատուցանելու համար: Չօրավարը մերժեց ու Նոյնիսկ խիզախութիւն ունեցաւ անարգելու կուռքերը: Մոգերը յարձակեցան անոնց վրայ, ու ոտնակոխ ընելով սպանեցին գաւակը: Սարգիս դատուեցաւ ու զխատուեցաւ, սպանուեցան նաեւ անոր հաւատարիմ 14 զինուորները:

Նահատակուելէ ետք Սարգիսի մարմինն վրայ լոյս ծագեցաւ: Սուրբ Սարգիս իր մահկանացուն կնքեց Քրիստոսէ ետք 362 թուականին վերջը կամ 363 թուականի սկիզբը:

Անոր տօնը երբեմն Յունուարին եւ երբեմն Փետրուարին կը հանդիպի: «Յայսմաւուրք»ը հետեւեալը կը գրէ. «*Սուրբ Սարգիս մահացաւ Մաղղնդարան կոչուած վայելուչ վայրին մէջ, Դաղման քաղաքին մօտ: Հաւատացեալները սուրբ Սարգիսին մարմինը առնելով տարին Համիան քաղաք: Ապա Մեսրոպ մեծ վարդապետը գալով՝ առաւ սուրբ Սարգիսի մարմինը եւ տարաւ Կարբի, եւ զայն պատուով թաղեց: Ապա Նոյն տեղը հռչակաւոր վանք մը շինեց, որ մինչեւ այսօր կը մնայ: Ան սուրբին ակրաներէն մէկը առնելով տարաւ Վրաստան՝ Գագայ դաշտը, եւ դրաւ խաչափայտին մէջ: Խաչը օծելով՝ կանգնեցուց Գագայթ բլուրին գագայթը, որ մինչեւ այսօր կը կոչուի «Գագայթ Սուրբ Սարգիս»: Ան մեծամեծ հրաշքներ կը գործէ գերեալներու, բանտարկեալներու եւ ցաւագարներու համար:*»

Ս. Սարգիս հռչակ ուներ ոչ միայն հայոց, այլ բոլոր արեւելեան քրիստոնէաներուն մօտ: Հայեր բազմաթիւ եկեղեցիներ ունին անոր անունով: Ժողովուրդը բազում հաւատալիքներ ու ծեսեր կապած է անոր անունան:

Առաջաւորաց պահքը ժողովուրդը վերանուանած է Ս.Սարգիսի պահք կամ տօն անունով: Հին Հայաստանի մէջ կրօնական այս տօնը ժողովրդական սիրուած տօն էր, որ կապուած էր երիտասարդութեան սիրոյ հետ: Որոշ Հետազօտողներու կարծիքով Ս. Սարգիսի անուն շուրջ հիւսուած առասպելը Արա Գեղեցիկի եւ Շամիրամի առասպելի քրիստոնէական պատմութիւնն է: Արա Գեղեցիկ ծանօթ է իբր բնութեան եւ բուսականութեան զարթօնքի աստուածութիւն: Նոյնն է Ս.Սարգիսը, որուն առասպելին մէջ, «Ս. Սարգիսի յոյն աղջիկը առեւանգելու առասպելը», առաւելապէս շեշտուած է սիրոյ, ամուսնութեան գաղափարը:

Հայաստանի բոլոր նահանգներուն մէջ Ս.Սարգիսի տօնին երիտասարդները աղի հաց կ'ուտեն եւ ծարաւ կը քնանային, որպէսզի իրենց ապագայ հարսնացուներն ու փեսացուները իրենց երագներուն մէջ ջուր տալով հաւաստեին իրենց նուիրական սերը:

Անոնք միաժամանակ վայրի թռչուններուն համար հաց եւ կերակուր կը դնէին, որպէսզի անոնց ուղղութեան հետեւելով գուշակէին հարսնուներուն ու փեսացուներուն գտնուած վայրը: Տօնը, որպէս երիտասարդական տօն կը կատարուէր աղջիկներու եւ տղաներու առանձին-առանձին խումբերով:

Աւանդութեան համաձայն Ս. Սարգիս իր օրապահիկ աղանձը (խարկուած ցորեն) գրպանը դրած ութօրեայ կռիւի մասնակցած է յունադաւան վրացիներու դէմ, այդ ընթացքին աղանձի հատիկները փոխինձի «խարկուած ալիւրով, իւղով ու մեղրով ուտելիք» վերածուած են: Իբրեւ թէ այս յիշատակին համար ալ Ս.Սարգիսի տօնին մեծ կիները փոխինձ կը դնէին դրան տեսելը, որպէսզի Ս.Սարգիսը ձիով անցնելու ատեն հետքերը ձգէ անոր վրայ: Արդէն աղանձը ինքնին կը խորհրդանշէ բուսականութիւնն ու անոր զարթօնքի գաղափարը, որ կապուած է Ս. Սարգիսի հետ:

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՎԱՐՉԱՊԵՏ...

Սկիզբ՝ էջ 3

ներուն գծով երկու հեռանկարներ ճշդած է, գորս պետք է անուանել յեղափոխական: «Առաջինը՝ որքան որ զարմանալի է, մենք անկախութեան առաջին օրերէն սկսեալ խօսելով Սփիւռքի ներուժին մասին՝ մինչեւ օրս չունինք Սփիւռքի ներուժի քարտեզագրում: Մենք մինչեւ օրս չենք գիտեր, թէ ո՞ր երկրին մէջ Սփիւռքը ինչպիսի՞ կարողականութիւն ունի, ազդեցութեան ինչպիսի՞ միջավայր է ծաւալ: Դետեալաբար, այս ամբողջ համակարգը բաւարար չափով չէ կազմակերպուած եւ, եթէ նկատած էք՝ կառավարութեան գործունէութեան ծրագիրին մէջ առանձնայատուկ տեղ յատկացուած է համահայկական ցանցի ստեղծման: Մենք պիտի ունենանք համակարգ մը, որ իր մէջ պիտի ներառէ ամփոփ եւ կիրարկելի ամենօրեայ տեղեկատուութիւն, թէ սփիւռքի ո՞ր հատուածին մէջ մենք ինչպիսի՞ ներուժ ունինք, եւ այդ ներուժին հետ կառավարութիւնը ինչ համագործակցութիւն պետք է իրականացնէ Դաշնաստանի Դաշնապետութեան տրնտեսական, քաղաքական, անվտանգութեան մակարդակը բարձրացնելու առումով: Վստահաբար, սփիւռքի նկատմամբ Դաշնաստանի Դաշնապետութիւնը ունի պարտաւորութիւններ եւ ծառայութիւններ, եւ մենք ամէն ինչ պետք է ընենք անոնք պատշաճ մակարդակով ապահովելու համար», ըսաւ Փաշինեան:

Յաջորդ կարեւորագոյն հարցը եւ գործօժը Սփիւռքը ներկայացնող միասնական կառոյցի եւ միասնական կազմակերպութեան կամ ձեւաչափի ստեղծումն է: «Մենք պետք է կարենանք ձեւաւորել եւ ձեւակերպել յստակ հասցէ՝ արձանագրելու համար, թէ Սփիւռքի հետ խօսելու համար մենք որո՞նք հետ պետք է խօսինք: Ծատ հարցեր կան կառավարութեան, քաղաքական օրակարգին մէջ, երբ կ'ըսուի, որ այս հարցերը պետք է քննարկել Սփիւռքի հետ, իսկ յստակ որո՞նք հետ, որովհետեւ Սփիւռքը շատ մեծ ծաւալներ ունի եւ շատ ընդգրկուել է: Կան հազարաւոր կազմակերպութիւններ, եւ եթէ ֆիզիքապէս անոնց մէկ մասին հետ կարելի է քննարկել, ապա միւս մասին եւ բոլորին հետ կարելի չէ քննարկել: Դետեալաբար մենք խնդիր ունինք ձեւաւորելու ամբողջ սփիւռքը ներկայացնող ինչ որ ներկայացուցչական կառոյց եւ մենք բոլորս կը հասկնանք, որ սա պիտի ըլլայ չափազանց մեծ մարտահրաւեր եւ լրջագոյն խնդիր, որովհետեւ գիտէք, որ սփիւռքը բազմաշերտ է, շատ բարդ է, այնտեղ կան բազմաթիւ յարաբերութիւններ, հակասութիւններ: Այսօր մենք ունինք նաեւ իրավիճակ, որ սփիւռքահայութեան մէկ զգալի հատուած դուրս մնացած է Սփիւռքի կազմակերպման մեզի յայտնի ու անտեսական շրջանակէն, եւ մենք պետք է այդ ներուժը կեդրոնացնենք եւ այդ ներուժի ու Դաշնաստանի յարաբերութիւններուն համար ստեղծենք հարթակ, յստակ

հասցէ: Եւ երբ այդ հարթակին հետ տեղի ունենան քննարկումներ որեւէ հարցի շուրջ, կրնանք ըսել, թէ մենք օրինական իրաւունք ունինք ըսելու, որ այս հարցը քննարկուած, համաձայնեցուած է սփիւռքի հետ», եզրափակեց վարչապետը:

### ԸՆԿԵՐԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 5

ցութեան միջոցով կարելի պիտի ըլլայ բարձրացնել դաշնակցական ընկերուհիին տեղն ու դերը: Կասկած չկայ, որ Ընդհանուր Ժողովը ամբողջովին կը գիտակցի նման որոշումներու գործադրութեան հետ կապուած բարդութիւններուն, բայց յառաջադէմ գաղափարական շարժում ըլլալու հանգամանքը, ազգի ամբողջական ներուժին լիարժէք օգտագործման հրամայականը եւ հայ կնոջ դերին բարձրացման նախանձախնդրութիւնը նման որոշում մը կայացնելու մոլիչ ուժ կը հանդիսանային: Ուստի, հայ կնոջ դերին բարձրացման կարեւորութիւնը, յաւելեալ շեշտադրումով մը, կը վերահաստատուի ԶՅԴ Գաղափարական կեդրոնացումի մէջ, ինչ որ կը նշանակէ, որ այն պարտաւորեցնող է համադաշնակցական տարողութեամբ, բոլոր շրջաններու համար, որոնք կազմակերպական ապակեղորնացեալ միջոցներով պիտի լծուին դաշնակցական ընկերուհիի դերին բարձրացման գործին:

### ՏԵՄՈՆԸՆ ԴԱՌԱՋԻ...

Սկիզբ՝ էջ 5

ապա հաւատացեալներ մոմեր կը վառեն Ս. Խորանէն: Դաւանող սովորութեան համաձայն, եկեղեցւոյ բակը հրավառութիւն կը կատարուի: Կրակ վառելը հեթանոսական արմատներ ունի: Ժողովրդային տօնախմբութիւն մը, որ նախապաշարումներու եւ բաղդագուշակութեան հետ առնչուած էր, հիւսիսային կողմէն: Դաշնաստանի մէջ խարոյկահանդէսներ տեղի կ'ունենային, իւրաքանչիւր գաւառ տօնակատարութեան յատուկ ձեւ ունէր, այս մասին ամփոփ տեղեկութիւններ հետաքրքրական բացատրութիւններ տուած է լուսահոգի Արտակ Արք. Մանուկեանը իր հեղինակած «Դաշնակեցւոյ Տօները» գիրքին մէջ (էջ 62-էն 69): Դրավառութիւնը հեթանոսական պաշտամունքի երեւոյթ է: Ս. Գրիգոր Լուսաւորիչ կործանեց մեհեանները եւ անոնց փոխարէն կառուցեց եկեղեցիներ, որպէսզի կառքերու պաշտամունքը խափանուի եւ ճշմարիտ աստուածապաշտութեան կանոնը հաստատուի որպէս քրիստոնէական հաւատքի անխախտ սկզբունք: Դրանուստան կանոնները ժամանակակից են, իսկ եկեղեցւոյ հաւատքը անփոփոխ եւ անփոխարինելի ճշմարտութիւն է, որովհետեւ «Քրիստոս իր աստուածային գործութեամբ մեզի պարգեւեց ամէն ինչ որ անհրաժեշտ է աստուածա-

պաշտ կեանքի մը համար» (Բ. Պոտ 1.3) Առաքեալին «ամէն ինչ որ անհրաժեշտ է» բառերէն կը հետեւեցնենք Աւետարանի ուսուցումներուն վեհութիւնը եւ կատարելութիւնը:

Տեառնընդառաջին՝ Փետրուար 14-ին, Ս. Եւ Անմահ պատարագ կը մատուցուի: Տօնին առիթով յօրինուած շարականները կը վերագրուին Ս. Մովսէս Խորենացի Պատմաօր: Տեառնընդառաջի խորհուրդով եկեք Աստուծոյ մօտենանք, հաւատքով արմատանանք, շնորհքով պայծառանանք եւ բարի գործերով պարգաբեր դառնանք:

Թող օրինուին Ս. Խորան ընծայուած բոլոր հայ մանուկները:

Թող հայ ընտանիքներուն մէջ տիրեն սերն ու սրբութիւնը, համաձայնութիւնն ու համերաշխութիւնը, որպէսզի հայ օճախը մնայ շէն եւ հաւատաբոյր:

### ԲԱԽՏ...

Սկիզբ՝ էջ 8

Կիրոնացական օրուան աւարտին, սովորութիւն կար, որ ծնողական խորհուրդը խմիչք եւ ուտեստներէն վաճառէր աշակերտներուն եւ ծնողներուն, ու ջերմ մթնոլորտ մը ստեղծէր: Չէնիթ, երբ գործնական հայերէնի իր դասապահը աւարտեց, սպասեց Սիւզանին դուրս գալուն: Աշակերտները դարձեալ անոր մէջքին փաթթուած էին... «Երեխէք ջան», «Երեխէք, գգո՛յ՛ք» ըսելով ու իրար քաջքշելով Սիւզանն ու իր խումբը սրահ հասան: Չէնիթ մօտեցաւ Սիւզանին, անոր նշածէ սեւ աչքերուն մէջ խորունկ հայեացք մը նետելէ ետք, ձեռքը երկարեց ու ինքզինք ծանօթացուց: Յետոյ միասին սուրճ մը խմեցին եւ աշէն-ծախէն սկզբնական խօսիլ: Բաժանումի պահը հասած էր: Սիւզան իր գեղեցիկ բաճկոնն ու վարդագոյն փողկապը հագած պահուելու, Չէնիթ ձեւացուց որ ինք եւս դուրս պիտի ելլէ եւ անմիջապէս վերադառնալու հազուեցաւ: Երկուքը միասին դպրոցէն դուրս ելան: -Ընկերս դուրսը սպասում է, ինքն էլ ձեզ պէս համալսարանական է, - ըսաւ Սիւզան: Դաւանք թաղին ծայրը: Սիւզան մօտեցաւ Չէկ մագերով ու բոլորովին արեւմտեան տեսք ունեցող տղու, շուրջերուն համբոյր մը տուաւ ու զինք Չէկի ծանօթացուց, - This is Edi, my friend. Անոնք սիրահարներ էին... (շարունակելի)

### ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 11

գածութեան արժանացնել գայն, հետամտելով՝ արուեստի ու գեղագիտութեան ընդմէջէն դաստիարակչական թէ գիտակրթական օգտակար նպատակներ իրականացնելու: Կը մնայ որ առանց ջանք ինստիտուցիոն հունարեանք եւ բարգաւաճեցնենք արուեստը ու անոր միջոցաւ դաստիարակչական մատաղատի սերունդներ, որովհետեւ մարդ անհատի կազմաւորման մէջ գեղագիտական դաստիարակութեան հիմնական դերակատարութիւն վերա-

պահուած է: Սուրիահայ մեր վարժարաններէն ներս գեղագիտական կրթութիւնը ցարդ կը գտնուի սաղմնային վիճակի մէջ: Դետեալաբար, հարկ է գիտակցիլ գեղագիտական դաստիարակութեան անհրաժեշտութեան եւ առաջնահերթ կարեւորութիւն ընծայել անոր:

Այսօր, թէեւ Զալէպահայ ընտանիքներէն ներս գալիքներէն աւելցած է թիւը այն ծնողներուն, որոնք հակամետ են իրենց գաւակներու արտավարժարանային գաղղումները մղելու դէպի երաժշտութիւն եւ գեղարուեստ, սակայն այդ ընտանիքներէն քիչեր միայն հետեւողականօրէն եւ լրջութեամբ կը հետապնդեն իրենց սրտահատոր երեխաներու գեղագիտական դաստիարակութեան յոյժ կենսական հիմնախնդիրը:

### ԱՐՁԱՔԻՈՅ «ԳԵՂԱՐԴ»...

Սկիզբ՝ էջ 16

պէս նաեւ երկրիս վսեմաշուք նախագահին ու բանակին, որոնք անկոտրում կամքով կը պայքարին խաղաղութեան համար: Տեր Վազգէն խրախուսեց բոլոր ազգային մարմինները, որոնք Լաթաքիոյ մշակութային եւ ազգային կեանքը կը հարստացնեն նման ձեռնարկներով, ապա անդրադարձաւ Դաշնագոյնի Դաշնապետին Մշակութային Միութեան 90-ամեակին ու առաքելութեան՝ դիտել տալով որ հիմնադիրներուն տեսիլքը պետք է վառ մնայ սերունդներուն մտքին ու հոգիին մէջ: Զեռնարկը աւարտին հասաւ «Պահպանիչ» աղօթքով: Այս առիթով «Գաւառասար» հանդիպում մը ունեցան Դաւազգայինի «Վահան Նաւասարդեան» Մասնաճիւղի Վարչութեան ատենապետուհի Նայիրի Կարապետեան-Գաթրճեանի հետ: Ան խօսելով մասնաճիւղի գործունէութեան մասին դիտել տուաւ, որ վարչութիւնը Դաւազգայինի շարքերուն մէջ հայ երիտասարդութիւնը ներգրաւելու համար անհրաժեշտ համարեց զիրենց հետաքրքրող եւ խանդավառող ձեռնարկներ կազմակերպել, յատկապէս երաժշտութեան եւ պարի խումբեր կազմելով: «Նախ կազմեցինք պարախումբը, որ շատ լաւ ընդունելութիւն գտաւ, աշխուժ մթնոլորտ մը ստեղծուեցաւ, արդիւնքն ալ դուք կը տեսնէք այսօր՝ «Գեղարդ» պարախումբին ելոյթով: Մարտ ամսուն պիտի սկսին մասնաճիւղի «Նարեկ» երգչախումբին փորձերը: Խումբին գեղարուեստական ղեկավարութիւնը պիտի վստահինք Արփի Զէյնեանի», ըսաւ ան: Գաթրճեան աւելցուց. «Երիտասարդութիւնը մեծ հետաքրքրութիւն ցուցաբերեց յատկապէս հայկական պարին նկատմամբ: Պարողները աջալրջութեամբ հետեւեցան փորձերուն: Յառաջիկային պարախումբը ելոյթներ պիտի ունենայ նաեւ Դաւազգայինի մէջ: Իմ երազն է որ «Գեղարդ» պարախումբը ելոյթ ունենայ նաեւ Դաւազգայինի «Գ. Եսայեան» սրահի բեմահարթակին վրայ»:



Ռաֆֆի Սիլահեան

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՖԻՖԱ-ի Դասաւորման Մէջ Սուրիա 10 Աստիճան Նահանջեց

ՖԻՖԱ-ի հրապարակած նոր դասաւորման մէջ Սուրիոյ ֆութպոլի հաւաքականը վերջին շրջանին արձանագրած ծախող արդիւնքներուն պատճառով ընդհանուր դասաւորման աղիւսակին մէջ տասը աստիճան նահանջեց եւ գրաւեց 83-րդ դիրքը: Աղիւսակին առաջին դիրքին վրայ մնաց Պելճիքան, անոր յաջորդեցին Ֆրանսան, Պրագիլը եւ Իրուաթիան: Առաջին Տասնեակին մէջ եղան նաեւ Անգլիան, Փորթուկալը, Ուրուկուէլը, Չուիցերիան, Սպանիան եւ Դանիան: Յիշենք, որ Հայաստանի հաւաքականը անփոփոխ՝ 101-րդ դիրքին վրայ մնաց:



### Կոռ Երիցեան Տօնեց 10-րդ Անընդմէջ Յաղթանակը

Հայ արհեստավարժ բռնցքամարտիկ, WBO վարկածով աշխարհի երկուսասարդներու պիտոյեան Կոռ Երիցեան տօնեց իր 10-րդ անընդմէջ յաղթանակը: Սոչիի մէջ ընթացող արհեստավարժ բռնցքամարտի երեկոյի ընթացքին Հայաստանը ներկայացնող բռնցքամարտիկը յաղթեց Մաքսիմիլանո Լեոնել Սքալզոնին: Հայ մարզիկը յաղթանակի հասաւ արդէն առաջին կիսախաղին:



### Սլովենացի Չեֆերին Վերընտրուեցաւ «Ի. Է. Էֆ. Ա.»-ի Նախագահ Ուրբաթ օր Հոմոսի մէջ տեղի ունեցաւ Եւրոպայի «Ի. Է. Էֆ. Ա.»-ի համագումարը եւ կոմիտէի նախագահական ընտրութիւնը, որուն աւարտին 51 տարեկան սլովենացի Ալեքսանտր Չեֆերի վերընտրուեցաւ «Ի. Է. Էֆ. Ա.»-ի նախագահ: Ան այդ պաշտօնին համար առաջադրուած միակ թեկնածուն էր: Աւելցնենք, որ ան նախապէս վարած է Սլովենիոյ ֆութպոլի դաշնակցութեան նախագահի պաշտօնը, իսկ 2016-ին ստանձնած է այս պաշտօնը՝ դառնալով «Ի. Է. Էֆ. Ա.»-ի 7-րդ նախագահը:



### Սարին Չձեռնուեցաւ Կուարտիլայի Հետ

Անգլիոյ ֆութպոլի պիտոյեանութեան 26-րդ փուլի մրցումներուն ընթացքին, Կիրակի երեկոյեան Մանչեսթըր Սիթին 6 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Չելսին: Յաղթական խումբին երեք կոլերը նշանակեց Աքուիարոն, երկու կոլ՝ Ռահիմ Սթըրլինգը, իսկ մէկ կոլ՝ Ճոնտոնան: Հանդիպումէն ետք, լոնտոնցիներու գլխաւոր մարզիչ Մաուրիցիո Սարին չստացաւ մանչեսթըրեան ակումբը գլխաւորող Պեպ Կուարտիլայի ձեռքը: Հանդիպումը աւարտելէ անմիջապէս ետք, իտալացին հանդերձարան ուղղուեցաւ: Անոր փոխարէն Կուարտիլայի հետ ձեռնուեցաւ Սարիի օգնական Չանֆրանկո Յոլան:



### Պայերն Միւնխի Նոր Մարզիչ Պիտի Ունենայ

Ըստ գերմանական մամուլին, երկիրի ֆութպոլի գործող պիտոյեան Պայերն Միւնխի յառաջիկայ տարեշրջանին համար փոփոխութեան պիտի ենթարկէ խումբին մարզիչը: Ափոյեան ակումբին վարչակազմը դժգոհ է խումբի ներկայ մարզիչէն՝ Նիքո Զոլպաչէն: Ըստ հաղորդուած տեղեկութիւններուն, տոյս պաշտօնին համար կան երկու թեկնածուներ, որոնցմէ մէկն է Մանչեսթըր Իւնայթըտի նախկին մարզիչ ժոզէ Մուրինիօն, իսկ երկրորդը՝ Ռեալ Մատրիտէն հեռացած Խիլէն Լոպէթէկին:



## ՄԱՐԶԱՅԵՐ

## ԸՄԲՇԱՍԱՐՏ



Պետիկ Աշոտեան

Ըմբշամարտ, երկու մարզիկներու գօտեմարտի ընդհանուր անուանում, որ կը ներառէ քանի մը մարզածէ՝ յունահռոմեական, ազատ ոճի, ճիւտօ եւ սամպօ, որոնց առաջին երեքը կը մտնեն ողոմպիական խաղերու ծրագիրին մէջ, ինչպէս նաեւ ազգային ըմբշամարտերու ծրագիրին մէջ:

### ԿԱՆՈՆՆԵՐ

Ըմբշամարտը որոշ կանոններ ունեցող առանձին պայքարի մարզածէ մըն է, ուր գօտեմարտողներուն նպատակն է մրցակիցին նկատմամբ առաւելութիւն արձանագրել՝ կէտեր ապահովելով կամ մրցակիցին թիկունքը գետին դպցնելով: Հին ժամանակներէն, երբ ըմբիշներ կը գօտեմարտէին, մարտերուն տեւողութիւնը սահմանափակուած չէր եւ կը շարունակուէր մինչեւ մրցակիցներէն մէկուն յաղթանակը: Ըմբշամարտի մէջ չկային ծանրութեան կարգեր եւ բոլոր մարզիկները, անկախ իրենց ծանրութեան տարբերութենէն, պարտաւոր էին մարտ վարել իրարու դէմ: Առաւելութիւնը կը ստանար աւելի ծանր կշիռը ունեցող մարզիկը, եւ, քանակաւաբար, յաճախ յաղթական դուրս կու գար: Ըմբշամարտի նման մրցումները տարածուած էին բազմաթիւ երկիրներու մէջ: Անոնք կը կազմակերպուէին հին յունական ողոմպիական խաղերուն ընթացքին, հայկական ազգային տօնախմբութիւններուն, այլ երկիրներու ազգային տօներուն եւ յաճախ կ'աւարտէին թեթեւ ծանրութիւն ունեցող մարզիկներուն պարտութեամբ կամ զգալի վնասուածքներով, իսկ երբեմն՝ նոյնիսկ մահով:



Մրցումի այս վիճակը մտահոգութիւններու առիթ կու տար, սակայն 1912-էն սկսեալ, երբ հիմնադրուեցաւ Ըմբշամարտի Միջազգային Դաշնակցութիւնը (Ֆետերասիոնը) կ'յս հարցերը աստիճանաբար սկսան լուծուիլ: Դաշնակցութիւնը ծանրութեան կարգեր սահմանեց, ինչ որ հաւասարութիւն մտցուց մրցակիցներուն միջեւ եւ նուազեցուց վնասուածքներուն քանակը: Ծանրութեան այդ կարգերը, սակայն, անփոփոխ չեն: Ժամանակի ընթացքին անոնք զանազան պատճառներով փոփոխութեան կ'ենթարկուին:


Փոխուած են նաեւ գօտեմարտի տեւողութիւնը, մրցումի բաժիններուն քանակը, մարտերու ընթացքին տրուող դադարներուն քանակն ու տեւողութիւնը եւ այլն: Այսպէս, մինչեւ 1924 գօտեմարտերը կը շարունակուէին մինչեւ մարզիկներէն մէկուն յաղթանակը: 1924-ին գօտեմարտի տեւողութիւնը 40 վայրկեան դարձաւ, որ կը բաժնուէր 20 վայրկեաննոց երկու մրցամասերու: 1928-ին գօտեմարտի տեւողութիւնը կրճատուեցաւ, ըմբիշները մարտը կը վարէին 10 վայրկեան կանգնած վիճակով, այնուհետեւ՝ 3-ական վայրկեան՝ ծնրադիր վիճակի մէջ եւ վերջին 4 վայրկեանը՝ կրկին կանգնած դրութեամբ: 1933-ին գօտեմարտի տեւողութիւնը 10 վայրկեան դարձաւ, ըստ որում ըմբիշները կը գօտեմարտէին միայն կանգնած վիճակով:

1945-ին ազատ ոճի ըմբիշներու գօտեմարտը սահմանուեցաւ 15 վայրկեանով՝ առաջին վեց վայրկեանին կանգնած վիճակի մէջ, 3-ական վայրկեան՝ ծնրադիր եւ վերջին 3 վայրկեանը՝ կանգնած դրութեամբ: 1950-ին այս կարգը սահմանուեցաւ նաեւ յունահռոմեական ըմբշամարտին համար: 1956-ին գօտեմարտի տեւողութիւնը դարձաւ 12 վայրկեան, որուն առաջին 6 վայրկեանը՝ կանգնած դրութեամբ, 2-ական վայրկեան՝ ծնրադիր, վերջին 2 վայրկեանը՝ կանգնած:

1961-ին գօտեմարտի տեւողութիւնը սահմանուեցաւ 10 վայրկեանով՝ 5-ական վայրկեաննոց 2 մրցամասով եւ մէկ վայրկեան ընդմիջումով:

1969-ին գօտեմարտի տեւողութիւնը դարձաւ 9 վայրկեան՝ 3-ական վայրկեաննոց 3 մրցամասերով՝ երկու մէկ վայրկեաննոց ընդմիջումներով:

1980-ին՝ 6 վայրկեան՝ երկու երեքական վայրկեաննոց մրցամասերով՝ մէկ վայրկեաննոց ընդմիջումով:



## ԼԱՌԱՔԻՈՅ «ԳԵՂԱՐՂ» ՊԱՐԱԽՈՒՄԲԸ ՆՈՐ ԵՐԱՆԳ ՏՈՒՄ ԳԱՂՈՒԹԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տեր Շահան Սրբ. Արք. Սարգիսեանի, կազմակերպութեամբ Համագայինի Լաթաքիոյ «Վահան Նաւասարդեան» Մասնաճիւղի Վարչութեան, «Գեղարդ» պարախումբը աւելի քան 500 հայ եւ արաբ հանդիսատեսներուն հրամցուց հայկական պարարուեստէն ծաղկաքաղ մը.



Մերթ ընդ մերթ այլ ազգերու պարեր եւ ներկայացնելով:



Պարախումբի գեղարուեստական ղեկավար, պարուսոյց Սուրեն Զիրազեան 4-ամսեայ հետեւողական փորձերով փոքրերէ, պարմանուհիներէ եւ երիտասարդներէ կազմուած



«Գեղարդ» պարախումբը նախապատրաստած էր անդրանիկ ելոյթին՝ յայտնաբերելով իւրաքանչիւր պարողի իւրայատկութիւնն ու տաղանդը:



Պարախումբը հանդէս եկաւ Լաթաքիոյ «Ալ Ասատ» մշակութային սրահէն ներս, ներկայութեամբ Լաթաքիոյ հոգեւոր հովիւ Տեր Վազգէն Զինյ. Զեօշկերեանի, Լաթաքիոյ Սըրբոց Նահատակաց եկեղեցւոյ Թաղականութեան, միութիւններու ներկայացուցիչներու, պետական պատասխանատուներու, սկաւտական պատասխանատուներու, վաշտերու եւ հարիւրաւոր հանդիսատեսներու:

Բացման հայերէն խօսքով Վարդուհի Կարապետեան-Թուլումճեան Նախ ներկաները հրաւիրեց մէկ



վայրկեան յոտնկայս յարգելու Սուրիոյ, Հայաստանի եւ Արցախի Նահատակներուն յիշատակը:

Այնուհետեւ ան անդրադարձաւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին 2019-ն «Հայ Մամուլի Տարի» հռչակելու ոգեւորիչ Նախաձեռնութեան, ապա լուսարձակի տակ առնելով երիտասարդները հայ մշակոյթի շունչով ու ոգիով ներշնչելու Համագայինի առաքելութիւնը, ան յայտնեց որ ծնողները իրենց գաւակները դէպի հայ մշակոյթ ուղղելու կարեւոր պարտականութիւնը ունին,

որպէսզի զանոնք մշտապէս աղերսուած պահեն հայկական կեանքին: Թուլումճեան ներկայացուց պարախումբը, անոր գեղարուեստական ղեկավարը, ապա շնորհակալութիւն

յայտնեց երկրիս նախագահին, Դամասկոսի Մշակոյթի Տնօրէնութեան, Համագայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան, «Գեղարդ» պարախումբի անդամներուն եւ ծնողներուն, որոնք իրենց գաւակները վստահեցան Համագայինին:

Արաբերէն բացման խօսքով Շուշան Ճանեցեան-Անթունեան բարի գալուստ մաղթեց պետական հիւրերուն, Լաթաքիոյ հոգեւոր հովիւին եւ

միութիւններու ներկայացուցիչներուն, յայտնելով որ Սուրիան գիտութեան, արուեստի, մշակոյթի եւ դի-

մադրողականութեան երկիր է: Երկիր մը, որ ոռոգուած է իր Նահատակներուն արեամբ, իսկ Սուրիոյ ժողովուրդը ստեղծագործ ու պայքարունակ ժողովուրդ է: Ապա ան երախտագիտութիւն յայտնեց սուրիական բանակին ու երկրի վստեմաշուք Նախագահ տղթք. Պաշար ալ Ասատին, որոնք ոգի ի բռին կը պայքարին կանգուն պահելու Սուրիան եւ թափ տալու անոր վերականգնումին:

Այնուհետեւ ներկայացուց պարախումբին յայտագիրը եւ յատուկ



շնորհակալութիւն յայտնեց Լաթաքիոյ Մշակոյթի Տնօրէնութեան, Լաթաքիոյ սկաւտական 11-րդ վաշտի ներկայացուցիչներուն եւ բոլոր



անոնք, որոնք նիւթապէս եւ բարոյապէս սատարեցին այս ձեռնարկին յաջողութեան:

Արդարեւ, յաջորդաբար հանդէս եկան «Գեղարդ» պարախումբի անդամները: Անոնք առաջին բաժինով ներկայացուցին 8 հայկական եւ օտար ազգերու ժամանակակից պարեր՝ «Քոչարի», «Եարխուշտա», «Արաբական», «Եւրոպական», «Նախուլ» եւ «Կոտորածն Անգուր»՝ արժանանալով հանդիսատեսին բուն ծափողջոյններուն եւ գնահատան-

քին: Պարերու ընդմիջումին ներկաները մերթ ընդ մերթ իրազեկ դարձան իւրաքանչիւր պարի ծագումին ու անոր յատուկ տարագին, իսկ դաշնակահար Յակոբ Արզումանեան



ընտարական մեղեդիներով ջերմացուց մթնոլորտը:

Յայտագիրի երկրորդ բաժինով «Գեղարդ»-ի անդամները հեգաճկուն շարժումներով ներկայացուցին՝



«Արաբական», «Եւրոպական», «Շալախո», «Նազ պար», «Ես եմ» եւ ֆիլալի պարերը:

Աւարտին, Դամասկոսի սկաւտական վաշտի պատասխանատու Նեպիլ Իւսէֆ շնորհաւորեց պարախումբի անդամներն ու կազմակերպիչ մարմինը:



Օրուան եզրափակիչ խօսքով Լաթաքիոյ Հոգեւոր Հովիւ Տեր Վազգէն Զինյ. Զեօշկերեան ըսաւ. «Պարարուեստը մշակոյթի անբաժան մէկ մասն է, որ կը նպաստէ մեր ժողովուրդի գոյատեւման: Երիտասարդուհիներուն եւ պարմանուհիներուն



ներկայացումը ուրախացուց մեզի եւ յատուկ երանգ մը հաղորդեց մշակութային մեր կեանքին»: Ապա ան շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչ մարմինին, պարուսոյցին, պարողներուն եւ ծնողներուն, ինչ-